ենք պլանի կամայական մասշտաբ. վորքան մասշտաբը մեծ, այնքան ճիշտ կլինի խնդրի լուծումը: Գծանկար 121 վրա ընդունված է շրջանագծերի միջև 10) քայլ: զրա համեմատ՝ ուղղաձիգ գծի վրա հեռավորութունը նշանակված է մեկ հարյուրերորդական մասերով, ընչպես գնդացրի նշանոցն է կամ նշանոցային սղակը:




Գծանկ. 121.

Շրջանագծի թափանցված է այնպես, ինչպես ցելուլոզիդի բոլորակը 0—10 ճշտությամբ. ըստ հեռավորության, յուրաքանչյուր 100 քայլը թափանցված է 4 մասի՝ ճշտութունն է 25 քայլ:

Անկյունային պլանից ոգտվելու համար անհրաժեշտ է ունենալ նաև մի քառորդ շրջան՝ միևնույն չափերով, ինչ վոր պլանն է, թափանցիկ թղթի կամ ցելուլոզիդի վար և այնպես, վոր անկյունային պլանի բոլոր

գծերը քաշած լինեն սև գույնով, իսկ քառորդ շրջանի գծերը՝ կարմիր գույնով, աշխատանքները հեշտացնելու համար (գծանկ. 122):

- ԱՆԿՑՈՒՆԱՅԻՆ ՊԼԱՆԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՀՄՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏՅԵՎՅԱԼ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՍԱՆՔՆԵՐԸ
1. Հրամատարը դիտակետից իր անկյունաչափի 30—00 ուղղում է նշանին և հետո նշադրում է գնդացրի, յենթադրենք, թե ստացավ 4—80 հազ.
  2. Գնդացրի փողը պետք դարձնել գուլահեո՝ հրամատարի 30—00-ի հետո Դրա համար հրամատարը հրախան է տալիս Եանկյունա-



Գծանկ. 122.

չափը 34—80 ( $30-00+4-80$ ) ուղղել ինձ». այս հրամանը կատարելուց հետո, գնդացրի փողը կլինի գուլահեո՝ հրամատարի 30—00 ի հետո:

3. Չափել բազան վերոհիշյալ գլուխներում ցույց տված միջոցներով, յենթադրենք՝ հավասար է 235:

4. Գնդացրին ըը կատարում են նշադրումը նշադրման կետին և զրում են այդ նշադրումները:

ԱՆԿՑՈՒՆԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Վորոշել գնդացրի տեղը Դրա համար հրամատարն ընդունում է, վոր ինքը կանգնած է շրջանագծի կենտրոնում և իր անկյուն-

նաչափի 30—00 ն ուղղված է նշանին կամ որի ենտիրին. գնդացրի ուղղութիւնը վորոշող գծի վրա, տվյալ որինակում 31—80 շառավիղի վրա ընդունված մասշտաբով դնում է 235 քայլ և նշանակում է գնդացրի տեղը մի կետով կամ մի փոքրիկ խաչով. դա կլինի գնդացրի կանգնած կետը պլանի վրա: Այդ կետից հրամատարի 30—00-ի զուգահեռ պետք է քաշել մի գիծ ամբողջ անկյունային պլանի լայն կարութեամբ. այդ գիծը կլինի գնդացրի փողի ուղղութիւնը՝ հրամատարի 30—00 ի հետ զուգահեռ: Ահա այս վերջին գիծը կծառայի հետաշարում բոլոր հաշիվները կատարելու համար: Այդպիսի գիծ կետեր դրվում են բոլոր գնդացրիներին համար. յեթե գնդացրիներին քանակը շատ է, ապա դրանց պետք է համարակալել ըստ կարգի:

Այստեղ մի բան է միայն դժվարացնում հրամատարին. դա զուգահեռ գծի քաշելն է. ահա այդ գիծը քաշելու համար ոգնութեան է գալիս քառորդ շրջանը, կամ այդ կատարվում է գծանկ. 121. գծիկներին ոգնութեամբ, կամ փոքրիկ քանոնի և յեռանկյունու միջոցով:

Անկյունային պլանն ոգտագործելիս, մենք հրամատարի հետացման համար վոչ մի ուղղում չենք մտցնում և այդ ուղղումը մենք ստանում ենք զրաֆիկ ձևով: Ուրեմն, անկյունային պլանն ոգտագործելիս, սինուսացված բազան կամ հրամատարի հետացման համար ուղղումը պետք չի. շնորհիվ այդ պլանի, բավականին հեշտանում է հրամատարի գործը գնդացրի փողը նպատակին ուղղելու նկատմամբ:

**ԳՆԴԱՑՐԻ ՓՈՂՆ ՈՒՂՂԵԼ ՆՊԱՏԱԿԻՆ ԱՆԿ. ՊԼԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՄ**

Յեթե անկյունային պլանը չլիներ, ապա գնդացրի փողը նշանին ուղղելու համար պետք է վորոշելինք ուղղումը հրամատարի հետացման համար, իսկ դա բավականին դժվար է մի շարք հրամատարներին համար. ահա այդպիսի հրամատարներին ոգնութեան է գալիս անկյունային պլանը հետևյալ ձևով:

Յեթե հրամատարի անկյունաչափի 30—00 ուղղված է որի ենտիրին, ապա նշանը լիբնալու դեպքում, հրամատարը չափում է մինչև նշանը յեղած հեռավորութիւնը և միևնույն ժամանակ անկյունաչափի կամ գնդացրային քանոնի ոգնութեամբ չափում է, թե նշանը քանի բաժանում է մեզ ձախ է գտնվում: Անկյունային պլանի վրա նշանի տեղին համապատասխանող կետում նշանակում է նշանի պայմանական նշանը կամ դնում է մի կետ. այդ կետը պլանի վրա նշանակվում է Ն տառով (նկ. 121):

Որինակ. հրամատարի անկյունաչափի 30—00 ուղղված է առանձին ծառին. յենթադրենք, թե նշանը լիբնաց 2000 քայլի վրա առանձին ծառից 2—50 աջ. անկյունային պլանի վրա 30—00-ից 2—50 աջ շառավիղի վրա, 2000 քայլ հեռավորութեամբ նշանակում ենք նշանի տեղը. մեր որինակում Ն տառն է:

Վերադառնալով իմանանք, թե ինչպես է անցնում նշանի ուղղութիւնը գնդացրի նկատմամբ, դրա համար դնում ենք թափանցիկ քառորդ շրջանի կենտրոնն ուղիղ գնդացրի կանգնած կետում և նրա յեղը հիշատակում ենք գնդացրի 30—00 գծի հետ: քանի վոր քառորդ շրջանը թափանցիկ է, հրամատարը հեշտութեամբ կարգում է, թե ինչպես է անցնում նշանի ուղղութիւնը գնդացրի նկատմամբ. յենթադրում ենք, վոր նշանը գտնվում է վոչ թե անկյունային պլանի վրա, այլ գտնվում է քառորդ շրջանի վրա:

Վերևում հիշված որինակում նշանը գտնվում էր 2000 քայլի վրա և որինտիրից 2—50 աջ, բայց քառորդ շրջանի վրայի թիվը ցույց է տալիս, վոր գնդացրի նկատմամբ նշանը գտնվում է որինտիրից 1—75 աջ և 2175 քայլ հեռավորութեան վրա: Հրամատարը հայտնում է այս արժանքները գնդացրին, իհարկ է, նկատի ունենալով մթնոլորտային պայմանները և մյուս ուղղումները, և անմիջապես անցնում է հրաձգութեան:

**ԿՐԱԿԻ ՏԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԿ. ՊԼԱՆՈՎ .**


Անկյունային պլանով շատ հեշտ կարելի է կատարել կրակի տեղափոխութիւնը. այդ կատարվում է լիբնու յեղանակով:

I Յեղանակ. հրամատարը հրաման է տալիս ամբողջ, հիմնական անկյունաչափ. այս հրամանով բոլոր գնդացրիներն իրենց անկյունաչափի 30—00 զուգահեռ են դարձնում հրամատարի 30—00-ի հետ, վորից հետո հրամատարը կրակը տեղափոխում է այնպես, ինչպես ասված է վերևի որինակում, յենթադրելով վոր հին նշանը գոյութիւն չունի:

II Յեղանակ. Անկյունային պլանի վրա նշանակում է նոր նշանի տեղը. քառորդ շրջանի կենտրոնը դնում է գնդացրի կանգնած կետում և նրա յեղը ուղղում է վոչ թե գնդացրի 30—00 համեմատ, այլ հին նշանի ուղղութեամբ և այդ դրութիւնից, ինչպես ասված է վերևում, քառորդ շրջանի ոգնութեամբ չափում է նոր նշանի համար անկյունաչափը և նշանոցը:

- Գծանկար 123-ում նշանակված է 4 գնդացրի տեղերը:
- № 1 գնդացրի կանգնած է հրամատարի դիտակետի նկատմամբ 10—00 շառավիղի ուղղութեամբ, 150 քայլ հեռավորութեամբ:
- № 2 գնդացրի կանգնած է հրամատարի դիտակետի նկատմամբ 23—00 շառավիղի ուղղութեամբ, 75 քայլ հեռավորութեամբ:
- № 3 գնդացրի կանգնած է հրամատարի դիտակետի նկատմամբ 34—80 շառավիղի ուղղութեամբ, 235 քայլ հեռավորութեամբ:

№ 4 գնդացիքը կանգնած է հրամատարի դիտակետի նկատմամբ 44-00 շառավիղի ուղղությամբ, 350 քալ հեռավորությամբ: Գնդացիքները Ն. կետին ուղղելու համար հրաման է տրված:



Գծանկ. 123.

№ 1	Գնդացիքին որիենտիրից	1-00 աջ, նշանոց	31,5
№ 2	»	0-65 »	32,5
№ 3	»	0-25 »	34
№ 4	»	0-40 ձախ, »	32,5

Կրակը Ն<sub>1</sub> նշանից Ն<sub>2</sub> նշանին տեղափոխելու համար:

1	Յեղանակով. 1 գնդացիքին որիենտիրից	1-60 ձախ, նշանոց	27
II	»	1-80 »	28,5
III	»	2-20 »	30,5
VI	»	3-00 »	29,5

Կրակի տևողությունը.			
II	Յեղանակով. 1 գնդացիքին որիենտիրից	2-60 ձախ, նշանոց	27
II	»	2-60 »	28,5
III	»	2-40 »	30,5
VI	»	2-60 »	29,5

ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՎՈՐՊԵՍ ԳՆԴԱՅՐԱՅԻՆ ՔԱՐՏ

Անկյունային պլանը շատ հեշտ փոխարինում է գնդացրային քարտը. հրամատարն այդ պլանի վրա նկարում է բոլոր կարևոր տեղական առարկաները, նույնպես և մեռյալ տարածությունները և խափանիչ կրակի սահմանը:

Անկյունային պլանով հեշտությամբ կարելի է շատ կարճ ժամանակամիջոցում կազմակերպել խափանիչ կրակի ցանկալի շերտի վրա: Անկյունային պլանի ուղղորդումը մեր գնդացրային հրամատարի համար պետք է դառնա օկտուալ հարցերից սեկը Անկյունային պլանը հնարավորություն է տալիս հրամատարին, կրակն ուղղել այնտեղ վերտեղ ինքն է ցանկանում:

Գ Լ Ո Ւ Խ XI

ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆՆ՝ ՈՐԻԵՆՏԻՐԻ ՈԳՆՈՒԹՅԱՆԸ

Ծածկված դիրքերից որիենտիրի օգնությամբ հրաձգությունը հնարավոր է կատարել այն դեպքում, չէր հրամատարը և մարտիցը (կամ հիմնական գնդացիքը) տեսնում են մի հիմնական որիենտիր: Տեղի վրա միշտ հնարավոր է ընտրել մի այնպիսի որիենտիր, վորը տեսանելի լինի՝ թե հրամատարին և թե մարտիցին: Յեթե որիենտիրը մեկն է, կոչվում է հիմնական որիենտիր, իսկ յերբ տեղանքի վրա կարելի է գտնել մի քանի հարմար կետեր, վորոնք լերում են հրամատարին ու մարտիցին (կամ հիմնական գնդացիքին), այդ դեպքում որիենտիրները համարակալվում են այսպես՝ որիենտիր № 1, որիենտիր № 2 և այլն:


Այս ձևի հրաձգությունը շատ հեշտացնում է հրամատարի նպատատանքները՝ տվյալներ պատրաստելու խնդրում, և մարտիցը նպատակին ուղղելու համար պահանջվում է վոչ ավելի քան, մի բուպե. այս ձևը պատշաճ տեղն ունի հարձակողական մարտում և, առհասարակ, մարտի այնպիսի պայմաններում, վոր պահանջում են շատ կարճ ժամանակամիջոց՝ կրակը ցանկալի կետում կենտրոնացնելու համար: Որիենտիրի օգնությամբ հրաձգության տվյալներ պատրաստելու խնդրում հրամատարի համար վոչ մի բարդ գործիք հարկավոր չի, յեթև

հրամատարն ունի յերկդիտակ կամ գնդացրային քանոն. այդ գործիքները ոգնությամբ մարտկոցը կարելի յի շատ հեշտ ուղղել նպատակին հետևյալ յեղանակներով:

I Յեղանակ. Մարտկոցը տեսնում է որիենտիրը, դիրքերի ավագը հրաման է տալիս՝ «մարտկոց, անկյունաչափը 30—00 ուղղել որիենտիրին (ծառխն)»: Այս հրամանից հետո գնդացրի փողերը առանցքները շարունակությունները նայում են այդ կետին:

II Յեղանակ. Մարտկոցը չի տեսնում որիենտիրը, այլ որիենտիրը յերևում է միայն հիմնական գնդացրին. այս դեպքում դիրքերի ավագը կազմում է գուգահեռ հովհար այդ ուղղությամբ: Իրա համար հրաման է տալիս՝ «հիմնական գնդացիր, անկյունաչափը 30—00 ուղղել որիենտիրին»: Դրանից հետո կազմում է գուգահեռ հովհար՝ փոխադարձ տարադիտման միջոցով կամ մի այլ ձևով: Հովհար կազմելուց հետո, ընտրում է մարտկոցի համար մի հարմար նշադրման կետ, փորից հետո հովհարը պատրաստ կլինի որիենտիրի ուղղությամբ:

Որիենտիրի ոգնությամբ կրակելիս, կարող է լինել յերեք դեպք. — I Դեպք. Հրամատարը գտնվում է գնդացրի ձախտի ուղղությամբ, և յիրհացող նշանը գտնվում է որիենտիրի հետ մի գծի վրա (նկ. 124ա):



Գծանկ. 124ա.

Յենթադրենք, թե՛ № 1 նշանը յերևաց որիենտիրից դեպի աջ 2—00 (այս 200 հրամատարը դիտակետից չափում է յերկդիտակով, գնդացրային քանոնով կամ մի այլ ձևով):

Մարտկոցը նշանին ուղղելու համար հրամատարը հրաման է տալիս «նշան № 1, որիենտիրից աջ 2—00, գնդացրային կարգով մի հերթ կրակ»:


Դիրքերի ավագն այս հրամանն ստանալուց հետո, հրաման է տալիս «մարտկոց, անկյունաչափը 32—00 (30—00+2—00) ուղղել որիենտիրին»:

Այս հրամանից հետո մարտկոցն ուղղված կլինի նպատակին:

Այն դեպքում, լիբը որիենտիրը չի յերևում ամբողջ մարտկոցին, այլ յերևում է միայն հիմնական գնդացրին, այս դեպքում պետք է ամբողջ հովհարը (որիենտիրի ուղղությամբ պատրաստված) 2—00 մեծությամբ դարձնել դեպի աջ, փորից հետո հիմնական գնդացրի փողն ուղղված կլինի նպատակին, իսկ մյուս գնդացրերի փողերը կլինեն գուգահեռ հիմնական գնդացրին: Սովորական ձևով կրակի միացում կատարելուց հետո, բոլոր գնդացրերի փողերն ուղղված կլինեն մի կետին:

II Դեպք. Նշանը գտնվում է որիենտիրի գծի վրա, բայց հրամատարն ու մարտկոցը չեն գտնվում մի գծի վրա (գծանկ. 124բ):

Յերբ հրամատարն ու մարտկոցը մի գծի վրա չեն, այս պետք է գտնել անկյան գործադրիցը (կոեֆիցիենտը), ինչպես սովորած է վերևի գլուխներում, և հետո հրամատարի չափած անկյունը պետք է բազմապատկել այդ անկյան կոեֆիցիենտով. ստացած անկյան համաձայն, պետք է հրաման տալ մարտկոցին:




Գծանկ. 124բ.

Որինակ. Հրամատարը դիտակետից չափեց որիենտիրի և նշանի միջև յեղած անկյունը = 4—28, անկյան կոեֆիցիենտը = 2100:3000=0,7: Մարտկոցին պետք է հրաման տալ՝ «որիենտիրից աջ 3—00» ( $428 \times 0,7 = 3—00$ ):

Դիրքերի ավագը հրաման է տալիս՝ «մարտկոց, անկյունաչափը 33—00 ուղղել որիենտիրին»: Այս հրամանից հետո ամբողջ մարտկոցն ուղղված կլինի նպատակին:

III Դեպք. Հրամատարն ու մարտկոցը չեն գտնվում մի գծի վրա. մի գծի վրա չեն գտնվում նաև որիենտիրն ու նշանը (գծանկար 124գ):



Գծանկ. 124գ.


Այս դեպքում, բացի անկյան կոեֆիցիենտից, պետք է նկատի ունենալ նաև նշանի և որիենտիրի հեռավորությունները. այդ ուղղումն արվում է անկյունաչափային բաժանումներով, հետևյալ կերպ: Հրամատարն որիենտիրի հեռավորության և հրամանատար-նշանի հեռավորության տարբերությունը, արտահայտած նշանոցներով, բազմապատկում է 2-ով: Այդ ուղղումը պետք է կատարել հետևյալ կանոնով. յերբ հրամատարը գտնվում է մարտկոցից դեպի աջ, նշանը յերևում է որիենտիրից աջ, ուստի պետք է գուգահեռ, իսկ յեթե նշանը յերևում է որիենտիրից դեպի ձախ, պետք է հանել (չափած անկյունից): Յերբ հրամատարը մարտկոցից ձախ է գտնվում, իսկ նշանը յերևում է որիենտիրից դեպի աջ, պետք է հանել. յեթե նշանը յերևում է որիենտիրից դեպի ձախ, պետք է գումարել այդ կանոնը յերկուսով և հետևյալ աղյուսակից:



հարմար նշարման կետ չկա. նշանի հեռավորությունն է 2000 քալ — պահանջվում է գնդացրի փողն ուղղել նպատակին:

Լուծում. Հրամատարն իր անկյունաչափի 30—00 ուղղում է նշանին և տարադիտական քանոնը դարձնում է այնքան, վոր առարկայական տարադետի լարից արևի ստվերն ընկնի ուղիղ քանոնի էկենտրոնը, կարգում է անկյունաչափի հաստումը, յենթադրենք, թե հավասար է 54—60 (գծանկ. 125):

ար  $\alpha_1$ ,  $\alpha_2$ ,  $\alpha_3$  ու գաճեռության հետևանքով  $\angle a = \angle b$ :



Գծանկ. 125.

Յեթե հրաման տանք՝ «անկյունաչափը 54—60 ուղղել արևին» (դրա համար գնդացրի անկյունաչափի տարադիտական քանոնը դնենք 54—60 վրա և դարձնենք գնդացրին այնքան, վոր արևից ստացած ստվերն անցնի առարկայական տարադետի կենտրոնից), ապա գնդացրի փողը կլինի ղուգահեռ հրամատարի 30—00-ին:

Փողը նշանին ուղղելու համար անհրաժեշտ է ուղղում մտցնել հրամատարի հեռացման համար, վոր սովյալ որինակում հավասար է  $100:2 = 0-50$ : Հետևապես, գնդացրի փողը


նպատակին ուղղելու համար պետք է հրաման տալ՝ «անկյունաչափը 55—10 (54—60 + 0—50) ուղղել արևին»: Այս գործողությունը կատարելուց հետո գնդացրի փողն ուղղված կլինի նշանին:

Գ Լ Ո Ւ Խ XIII

ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ՝ ԳԼԽԱՎԵՐԵՎԻՑ ՅԵՎ ՍՐԱՆՔՆԵՐՈՎ:

Մեր կանոնադրքերում կոնկրետորեն չեն բացատրված գլխավերևից կրակելու բոլոր դեպքերը և հնարավորությունները, ուստի անհրաժեշտ է պարզաբանել գլխավերևից կրակելու բոլոր հնարավորությունները:

Խնդիր 1. Գնդացրը գտնվում է բարձունքի վրա, վորն աստիճանաբար, համարյա հավասարապես ցածրանում է հակառակորդի կողմը (գծանկ. 126). մինչև կրակային կետը 2000 քալ է. մեր յերկրորդ շարանը գտնվում է գընդացրից 300 քալի վրա, իսկ առաջավոր մասերը գտնվում են հակառակորդից 300—500 քալի վրա և նախադատրաստվում են գրոհի: Հրամատարը




Գծանկ. 126.

գնդացրային քանոնի ոչնությամբ գտնում է (յեթե տեղը լինի հարթ ու հորիզոնական), վոր մեր զորքերը գնդացրից պետք է հեռանան 500 քալ և հետո սկսեն հրաձգությունը և կրակը դադարեցնեն, յերբ մերոնք մոտենան թշնամուն 500 քալի վրա (քանոնի ճիշտ սյունակից): Հրամատարը վորոշում է, թե արդյոք հնարավոր է կրակել թե վոչ:

Լուծում. կրակել չի կարելի, վորովհետև մեր զորքերի ինչպես յերկրորդ շարանի, այնպես էլ առաջավոր մասերի համար վտանգավոր է:

Խնդրի ճիմնավորումը. Այս որինակում նշանառություն գիծը համարյա ղուգահեռ է գնում տեղանքին. միջին հետագծի բարձրացումը նշանառություն գծից և, հետևապես, մեր զորքերից կլինի այնպես, ինչպես (հարթ) հորիզոնական տեղանքում կրակելիս:

Գնդացրային քանոնից տեսնում ենք, վոր 20 նշանոցով գլխավերևից կրակելիս, մեր զորքերի հեռավորությունը գնդացրից պետք է լինի վոչ պակաս, քան 500 քալ, այն հաշվով, վոր միջին (ծայրի) հետագիծը բարձրանա նշանառություն գծից 11 մետր, իսկ այս խընդրում մեր զորքերը գտնվում են գնդացրից 300 քալի վրա. նշանառություն գիծը համարյա անցնում է նրանց գլխի վերևից, իսկ միջին հետագծի բարձրությունն այս դեպքում կլինի միայն 7 մետր, հետևապես գնդացրային քանոնում ցույց տված



Գծանկ. 127.

թվից 4 մետր պակաս (11—7=4 մետրի). ուստի կրակելը վտանգավոր է: Միևնույն դրությունն է մեր առաջավոր մասերի համար, վորոնք մոտեցել են հակառակորդին 300 քալի վրա:

Յեզրակացություն. Վերոհիշյալից կարելի չէ հանել հետևյալ յեզրակացությունը, Յերբ տեղանքը հավասարաչափ բարձրանում կամ ցածրանում է (գծանկ. 126 և 127), այսինքն՝ յերբ նշանառություն գիծն անցնում է մոտավորապես ղուգահեռ տեղանքին, ապա հրաձգություն պայմանը կլինի նույնը, ինչ վոր (հարթ) հորիզոնական տեղանքում: Այս բնորոշումով մենք յերբեք չլայնացրինք գլխավերևից կրակելու լայն հնարավորությունները, այլ մոտեցանք այդ խնդրի լուծման ընթացքին:


Խնդիր 2. Գնդացրը գրավել է կրակային կետ. հակառակորդից 1600 քալի վրա. թփուտների մեջ նկատվել է մի թեթև գնդացրային ջուկ: Մեր հրաձգային ջուկերը գնդացրից անցել են 300 քալ (տեղանք)

քի սելյեֆը տես գծանկ. 128). Գնդացրային ջոկը խնդիր և ստացել ոգնել գնդացրային կրակով հրաձիգ ջոկերի առաջխաղացմանը: Հնարավոր և արդյոք, թե վոչ:

Լուծում. Հնարավոր և, վերոմեջտե ասյ դեպքում գնդացրը գտնվում է նույն պայմաններում, ինչ վոր համապատասխանում է 24 նշանոցին:

Խնդրի լուծման հիմնավորումը. Հրամատարը գնդացրային քանոնով, հեռադիտակով կամ մի այլ միջոցով չափում է ուղղաձիգ անկյունը մեր զորքերի և նշանառության գծերի միջև. յենթադրենք, թե հավասար է 0—30. այստեղից նա պարզում է, վոր մեր զորքերը գտնվում են նշանառության գծից 7 մետր ներքև ( $\rho = \frac{300 \cdot 30}{1000} = 90 \times$  կամ կլոր թվով 7 մետր).

գրանից հետո № 2 աղյուսակով կամ գնդացրային քանոնի գծագրի (գրաֆիկի) ոգնությամբ իմանում ենք, վոր 16 նշանոցով գնդացրից 200 քալի վրա միջին հետագծի բարձրությունը նշանառության գծից հավասար է 4 մետրի: Հետևապես, միջին հետագծից մեր




Գծանկ. 128.

զորքերի գլխավերևից կանցնի 11 մետր (7+4) բարձր:

Ուստի հետագծի այդպիսի բարձրացումը նշանառության գծից, գնդացրից 300 քալլ հեռավորության վրա, ստացվում է միայն 24 նշանոցի ժամանակ: Գնդացրային քանոնից լերևում է, վոր 24 նշանոցով հրաձգություն կարելի չի սկսել այն ժամանակ, լերբ մեր զորքերը կհեռանան գնդացրից առնվազն 300 քալլ (գծանկ. 128):

Խնդիր 3. Յերկրորդ խնդիրը կարելի չի լուծել գնդացրային քանոնի ոգնությամբ այսպես՝ յեղունգը պետք է դնել 16 նշանոցի վրա և ուղղել նշանին (գծանկ. 129). առանց ձեռքի զրուկյունը փոխելու պետք է իջեցնել լեղունգն այնքան, վոր տարադիտման գիծն անցնի մեր զորքերի գլխի վերևից, և այդ կետում ստացած թիվը մեր որինակում կլինի նշանոց 24):

վորը ցույց է տալիս, վոր հրաձգությունը համապատասխանում է նշանոց 24-ին: Երանից հետո գնդացրային քանոնի ոգնությամբ գտնում ենք, վոր մեր զորքերը կարելի չի բաց թողնել գնդացրից 300 քալլ առաջ և 24 նշանոցով սկսել հրաձգությունը:



Գծանկ. 129.


Խնդիր 4. Գնդացրային քանոնի ոգնությամբ վերոշել արդյոք

հնարավոր է անվտանգ հրաձգություն կատարել գլխավերևից (խնդիր պայմանը նույնն է, ինչ վոր գերտիչյալ խնդրում):

Երբ համար հարկավոր է քանոնի վրա 16 նշանոցն ուղղել նշանին, առանց ձեռքի զրուկյունը փոխելու, նշանոցն ավելացնել 7-ով,  $16 + 7 = 23$  և նշանոց 23-ն ուղղել մեր զորքերին. յեթե տարա-դիտման գիծը մեր զորքերի գլխավերևից բարձր է, հրաձգությունը հնարավոր է, իսկ յեթե ցածր է, վտանգավոր է, չի կարելի կրակել:

Խնդիր 5. Գնդացրային ջոկը գրավել և կրակային դիրքեր հակահարձգային ջոկերը, մոտենալով հակառակորդին 300 քալլ հեռավորության վրա, պառկեցին փոսում և սպասում են գնդացրային կրակի ոգնության, վորպեսզի պարտաստվեն զրոհի:

Գնդացրի, մեր զորքերի և հակառակորդի զրուկյունը տես գծանկ. 130. Կարող է արդյոք գնդացրը կրակային ոգնություն հասցնել հրաձգային ջոկերին:



Գծանկ. 130.

Լուծում. Հնարավոր է, վորովհետև հրաձգության պայմանը նույնն է, ինչ վոր կարող էլինք ունենալ նշանոց 22 ժամանակ:

Լուծման հիմնավորումը. պետք է չափել նշանառության գծի և մեր զորքերի միջև չեղած անկյունը. յենթադրենք, ստացել ենք 0—15. այստեղից գտնում ենք, վոր մեր զորքերը գտնվում են նշանառության գծից 17 մետր ցածր ( $\rho = \frac{1500 \cdot 15}{1000} = 22,5 \times$  կամ 17 մ.). գնդացրային

քանոնի գրաֆիկի միջոցով կգտնենք, վոր նշանոց 18-ով, գնդացրից 1500 քալլ հեռավորության վրա միջին հետագծի բարձրացումը նշանառության գծից հավասար է 9 մետրի: Հետևապես, միջին հետագծից մեր զորքերից կլինի 26 մետր (17+9) բարձրության վրա, գնդացրից 1500 քալլ հեռավորության վրա. հետագծի այդպիսի բարձրացումը համապատասխանում է նշանոց 22-ին:

Գնդացրային քանոնի ոգնությամբ գտնում ենք, վոր նշանոց 22-ով գլխավերևից կրակելիս, հրաձգությունը պետք է զաղարեցնենք

այն ժամանակ, յերբ մեր զորքերը կմոտենան հակառակորդին 300 քայլի վրա:

Խնդիր 6. Գնդացրի նշանոցի ոգնությամբ վորոշել, հնարավոր ե արդյոք կրակել գլխավերևից, թե վոչ:

1. Նշանոցը պետք ե հաստել նշանի հեռավորության համեմատ, լինթադրենք 20, և փակել գնդացրի մեխանիզմները:


2. Նշանոցի թափանիվը պետք ե դնել 27-ի վրա (20 + 7) և փակել: Գրանից հետո նայել, թե վորտեղ ե նայում այդ նոր նշանառության գիծը և տեղում վորոշել այդ կետը:

3. Յերբ այդ կետը մեր զորքերից հեռու և բարձր ե, հնարավոր ե կրակել այնքան ժամանակ, քանի դեռ մեր զորքերը չեն մոտեցել այդ կետին, իսկ յերբ մոտեցան, պետք ե կրակը դադարեցնել:

4. Յեթե մեր զորքերը հասան այն կետին, վորտեղից արդեն պետք ե կրակը դադարեցնել, բայց անհրաժեշտություն լինի կրակը շարունակելու, դրա համար պետք ե առանց փոխելու 27 նշանոցը, թեթե հարվածներով գնդացրի փողը բարձրացնել այնքան, վոր այդ նոր նշանառության գիծը (27) համասեղվի նշանի հետ:

5. Այս պեպքում կրակը պետք ե դադարեցնել այն ժամանակ, յերբ մեր զորքերը կմոտենան մոտավորապես նշանի առջևի գծին:

Խնդիր 7. Գնդացրը, կրակային զիրքում չեղած ժամանակ, իր զորքերի և թեղանքի ուղիվի նկատմամբ կարող ե լինել լերկու գանազան պայմաններում (գծանկ. 131):



Նշանի հեռավորությունը գնդացրից հավասար ե 1400 քայլ, մեր յերկրորդ շարանը գտնվում ե գնդացրից առաջ, և նշանառության գծի ու յերկրորդ շարանի միջև չեղած անկյունը հավասար ե 0-35, չեղած պետք, մեր զորքերի նկատմամբ հրամատարը գտնվում և այնպիսի պայմանում, ինչպիսին կարող եր լինել 2400 քայլի վրա հրաձգություն կատարելու պայմաններում (նշանոց 14-ով նշանառ. անկ. = 0-15 + 0-35 = 0-50, իսկ 0-50 համապատասխանում ե նշանոց 24-ի) Ուրեմն, գնդացրը կարող ե կրակ բանալ այն ժամանակ, յերբ մեր յերկրորդ շարանը կհեռանա գնդացրից 300 քայլ առաջ, Հրամատարը միևնույն ժամանակ մոտենում ե Վ շարանի գլխավերևից կրակելու:

ու հնարավորության մասին: Հրամատարը գտնում ե այսպես. մեր զորքերը գտնվում են գնդացրի ու թիփուտի միջև, իսկ չես գտնվում եմ 2400 քայլից հրաձգություն կատարելու պայմաններում. դրանից հետո պայմանը կփոխվի, իհարկե, դեպի վատը, վորովհետև անկյունը կփոքրանա:

Դեղին թիփուտի և նշանառության գծի միջև անկյունը հավասար ե 0-20, ուրեմն, չես գտնվում եմ 2100 քայլից կատարվող հրաձգության պայմաններում (0-15 + 0-20 = 9-35, իսկ 0-35 համապատասխանում ե նշանոց 21-ին):

Ուստի հրաձգությունը պետք ե դադարեցնել այն ժամանակ, յերբ մեր զորքերը կմոտենան դեղին թիփուտին:


Ահա այն բոլոր կարևոր խնդիրները, վորոնք կարող են հանդես գալ գլխավերևից կրակելու դեպքում, իսկ ֆնացածի համար պետք ե գաղափարձել հրաձգային կանոնադրքի և մասում մատնանշած ցուցումները և գնդացրային քանոնի աղյուսակն ու դրաֆիկը, վոր ծանոթ են գնդացրորդներին:

Այս 7 անձանոթ խնդիրները լավ յուրացնելը հնարավորություն կտա հրամատարին լրիվ կերպով ոգտագործել ծանր գնդացրի կրակը՝ մեր զորքերի գլխավերևից հրաձգություն կատարելու համար. դրանով կապահովվի մարտի բախտն իր անընդհատ դիպուկ կրակով:

### ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՆՔՆԵՐՈՎ


Հրաձգային կանոնադրքի և մասը շատ պարզ կերպով բացատրում ե արանքներով կրակելու կանոնները: Նույնը սալիս և նաև գնդացրային քանոնը այս բաժնում սահմանափակվում ենք միայն յերկու նկարներով, վորոնք ընդգրկում են այն, ինչ վոր անված ե հրաձգային կանոնադրքում:

Գծանկ. 123, բացի տարածության մի քառասուներորդ մասից, վոր կոչվում ե անվտանգության գոտի, նկատի չե ունենում նաև բնական սրումը:



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. հետագծի խուրձում նշանակված թվերը:

ըր ցույց են տալիս բնական ցրման մեծութունը, զոր վերցված է Ն 3 աղյուսակից:



Գծանկ. 133.


Գ Լ Ո Ւ Խ XIV

ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ՝ ՈՂԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՎՐԱ.

Այս բաժնում արվում է միայն ողային նշանների վրա կրակելու անսահման մասը, զորովհետև ողային նշանների վրա կրակելու գործիքներն այնքան պարզ ու հասարակ են, զոր շրանց մասին այստեղ մանրամասն կանգ առնելու կարիք չկա:

Շարժական նշանների վրա կրակելիս, զենքի փողը միշտ պահվում է շարժվող նշանի շարժման ուղղությամբ վրա նրանից առաջ. նույնը պետք է կատարել ողային նշանների վրա կրակելիս.

Յենթադրենք, թե սավառնակը գտնվում է Ա կետում, և ա կետում ձիգ կատարելու մոմենտին սավառնակը շարժվեց ք կետի ուղղությամբ:



Գծանկ. 134.

ուստի գնդակը Ա կետը հասնելու մոմենտին սավառնակը գնդակի թռիչքի ժամանակամիջոցում կհասնի Բ կետը:

Սավառնակը հարվածելու համար անհրաժեշտ է ԱԲ զծի մեծությամբ գնդացրի փողն առաջ բռնել, զորպեսզի գնդակն ու սավառնակը իրար հանդիպեն մի կետում, ահա այդ ԱԲ զծի մեծութունը կոչվում է «կանխում» (ուղղում կողքի ուղղությամբ): Այդ ԱԲ զծի մեծության համար կանխումը, լինելով լինելով վերերկրյա նշանների նկատմամբ, կարելի է կլինել տալ ուղղանի միջոցով. իսկ ողային նշանների վրա կրակելիս, այդ կատարվում է Տիխմենովի ողակային նշանացույցովորն ունի մշտական շառավիղ (r) 35 մմ կերկարությունը (նկ. 134):

ԱԲ զծի մեծութունը զորոշելու համար պետք է սավառնակի արագութունը բազմապատկել գնդակի թռիչքի ժամանակամիջոցով (ողային նշանների վրա կրակելու դեպքում):

Յեթե ընդունենք, զոր, ողային նշանների վրա կրակելիս, սավառնակի արագութունը—V մետր է մի վայրկյանում և գնդակի թռիչքի ժամանակամիջոցը=t, ապա կախումը=V.t= $\frac{VD}{Vs}$  (1)

V=մինչև սավառնակը լեղած հեռավորությանը.

Vs=գնդակի միջին արագությանը:

Փողն առաջ տալու մեծութունը (կանխումը) կարելի է արտահայտել անկյունաչափի բաժանմունքներով:

$$\text{անխումը} = \frac{V.t.1000}{D} \quad (2)$$

Այս կանխումի մեծութունը գործնականում կանոնավորվում է Տիխմենովի ողակային նշանցի ոգնությամբ, զիժն անմիջապես փոփոխելով d-ի մեծությամբ [նշանացույցի գիծ կոչվում է հատիկի դաթից մինչև ողակային նշանցի կենտրոնը յեղած հեռավորութունը, զորի լեղակարութունը զորոշվում է անմիջապես m և n նման լեռանկյունիներից (գծանկ. 134)]:

$$\left. \begin{aligned} r &= \frac{Vt}{d} \\ d &= \frac{rD}{Vt} \\ r &= d \cdot Vt : D \\ d &= rD : Vt \\ Vt &= D : d \\ D &= d \cdot Vt : r \end{aligned} \right\} (3)$$

Այս 3-րդ ֆորմուլայում բոլոր մեծութունները փոփոխական են, բացի r շառավիղից, զոր հաստատուն է և հավասար է 35 մմ. Սավառնակը հարվածելու հավանականութունն ավելացնելու համար նպատակահարմար է կրակ բանալ ամբողջ մարտկոցով, իսկ ցրման

մակարդակը մեծացնելու համար անհրաժեշտ է, վոր չուրաքանչյուր գնդացիքն ունենա իր տարբեր նշանոցային գիծը (d):

Չորս գնդացիքի բաղկացած մարտկոցի համար d-ի մեծությունը պետք է լինի.

- 1-ին գնդացիք d-ն=300 մ/մ.
- 2-րդ » » =350 »
- 3-րդ » » =450 »
- 4-րդ » » =600 »

Ողային նշանների վրա կրակելու է-ի ժամանակամիջոցը վորոշելու համար ֆորմուլան հետևյալն է.

$$t=t_0 \sqrt{\frac{\sin r}{\text{tg} \tau_0 \cdot \text{Cos}(S+\tau)}} \quad (4)$$

$t_0$  = գնդակի թռիչքի ժամանակամիջոցին, վերերկրյա նշանների վրա կրակելիս:


$\tau_0$  = նշանառություն անկյան, վերերկրյա նշանների վրա կրակելիս:

$r$  = նշանառության անկյան, ողային նշանների վրա կրակելիս:

$S$  = տեղի անկյան, վորի տակ կրակում ենք ողային նշանների վրա:

$$\text{Sin } \tau = \text{Sin } \tau_0 \cdot \text{Cos } S \quad (5)$$

Ուղղաձիգ կանխումը վորոշվում է այս ֆորմուլայով (գծանկ. 135).



Գծանկ. 135.

$$\text{Sin}(S-S_1) = \frac{Vt \cdot \text{Sin } S_1}{D} = \frac{V \cdot \text{Sin } S_1}{Vs} \quad (6)$$

Ուղղաձիգ կանխումն անկյունաչափային բաժանմունքներով արտահայտած՝ կստանանք հետևյալ ֆորմուլան.

$$(S-S_1) = \frac{Vt \cdot 1000}{D} \quad (7)$$

Սավառակի՝ ոգտակար հեռավորությունը վորոշելիս, պետք է յեկնել գնդակի վերջնակետ արագություն մեծությունից:

Յեթե սավառակը շարժվում է ճակատի յերկարությամբ, սա-

վառակը շարքից դուրս բերելու համար գնդակի վերջնակետ արագությունը պետք է լինի առնվազն 220 մետր մի վայրկի:

Հեռացող սավառակի համար այդ արագությունը պետք է լինի շատ—220 գումարած սավառակի արագությունը 220+V:

Մտեցող սավառակի համար այդ արագությունը պետք է լինի քիչ—220-V:

Այստեղից բխում է այս գործնական կանոնը.

- 1. Անցնող սավառակի վրա 1500 մետրից արագութ. 220
- 2. Հեռացող » » 1000 » » 220+V
- 3. Մտեցող » » 1800 » » 220-V

ՍԱՎԱՌԱԿԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

$$\text{Սավառակի արագությունը } V = \frac{D}{K \cdot t_n} \quad (8)$$

$$\text{Սավառակի հեռավ.} = V K t_n \quad (9)$$

K կոչվում է կոեֆիցիենտ կամ գործակից, վոր հավասար է մի վորեքերի լայնության և պարզած ձեռքի յերկարության (60 սմ.) հարաբերությանը:

Որինակ. Գնդացրային քանոնի յերկարությունը հավասար է 15 սմ.

$$K = 15,60 = 1/4$$

Բուլթ մատի և ցուցամատի ծալքերի միջև յեղած տարածությունը (մատները բացված ժամանակ) հավասար է մոտավորապես 20 սմ.

$$K = 20,60 = 1/3$$

$t_n$  = այն ժամանակամիջոցին, վոր սավառակն անցնում է քանոնի մի ծալքից մինչև մյուս ծայրը կամ բուլթ մատից մինչև ցուցամատը:

Գազաթնահար հրաձգությունների ժամանակ մարդուն կարելի չէ շարքից դուրս բերել այն դեպքում, յերբ այդ գնդակի կենդանի ուժը կլինի հավասար 8 կիլոգրամմետրի:

Որինակ. Գնդակը գետնի յերեսին հասնելուց հետո, 86°—96° սահմաններում վայր ընկնելիս, նրա արագությունը հավասարվում է մոտ 80 մետրի մի վայրկյանում:


$$\text{Ուստի նրա կենդանի ուժը} = \frac{9,6 \text{ գր.} \times 80^2 \text{ մետր}}{9,8 \text{ մետր} \times 2} = 3,2 \text{ կիլոգրամմետր}$$

մետր աշխատանքի: Այս պատճառով, այդպիսի գնդակը մարդուն շարքից դուրս բերելու ընդունակություն չի ունենա, այլ կարող է միայն թեթև վերք առաջացնել:

9,6 գրամը գնդակի զանն է և 9,8 յերկրի ձգողական ուժի արագացումն է:

**ԳՍ.ԳԱԹՆԱՀԱՐ ՀԵՏԱԳԾԻ ՄԱՍԻՆ**

Գագաթնահար հետագծի ուսումնասիրության խնդիրը շատ կարևոր է այն դեպքում, յերբ մեր գործերի համար վորոշում ենք գոտին՝ օդային նշանների վրա կրակելու համար. այդ բոլոր ավյալներն արտահայտված են 136-րդ գծանկարում. այդ գծանկարի բոլոր թվականները



Գծանկ. 136.

ավյալները հաշված են մետրերով, իսկ բարձրացման անկյունը՝ աստիճաններով.

Ուրիճակ. Յերբ բարձրացման անկյունը հավասար է 75°, ապա գագաթի բարձրությունը = 2550 մետրի.

» հեռավորությունը = 1150 »

հորիզոնական » = 1500 »

Մանր գնդացիքը դիրքերում դասավորված ժամանակ ոդային նշանների վրա կրակելու համար անհրաժեշտ է ամբողջ տեղամասը բաժանել սեկտորների, վորոնց միջև հնարավոր է հրաձգություն կատարել առանց մեր գործերին հարվածելուց վախենալու. Աշխատանքները հեշտացնելու համար պետք է կատարել հետևյալը.

1. Քարտեզի վրա վորոշել գնդացիքի կանգնած տեղը.

2. » » » մեր գործերի տեղը.

3. Դնել քարտեզի վրա ցելուլոիդի բոլորակը, վորի կենտրոնը համատեղել գնդացիքի կանգնելու տեղում, 30—00 ուղղել դեպի հյուսիս, վորոշել անկյունաչափային բաժանումներով վտանգավոր գոտին ճակատի ուղղությամբ և չափել մինչև մեր գործերը լեղած հեռավորությունը:


4. Կազմել աղյուսակ և գնդացիքային քարտ՝ ոդային նշանների վրա կրակելու համար:

**ՎՏԱՆԳԱՎՈՐ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԵՎՏՈՐՆԵՐԸ**  
(կրակել չի կարելի).

ձախից	աջից
0—(5—00), մինչև 2000 մետր	(52—00)—(56—00). մինչև 2500 մետր.
(7—00)—(10—00) մինչև 1800 »	(38—00)—(30—00) բոլորը.
(18—00)—(30—00). ամբողջը.	

**ԳՆԴԱՑՐԱՅԻՆ ՔԱՐՏ**

Ոդային նշանների վրա կրակելու համար, այս բոլոր ավյալները



Գծանկ. 137.

հիմնականում վերցված են 136 գծանկարում ցույց տված ավյալներից և վերևում հիշված անկյունաչափի հաստատվածներից:

Գ Լ Ո Ւ Խ XV

**ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ**

Գիշերային հրաձգության ժամանակ կարող են լինել հետևյալ չորս գլխավոր դեպքերը.

- 1) Ինպի. գնդացիքն ուղղված է նպատակին ցերեկով և գնդացիքը մնացել դիրքերում գիշերվա համար.
- 2) Յերեկվա աշխատանք. 1) գրացիքը նպատակին կարելի չէ ուղղել առողջակի կամ ուղղակի նշանատուությամբ.
- 2) անուղղակի նշանատուության դեպքում, գնդացիք մի քանի քայլ հեռավորության վրա պետք է ունենալ ոգնող կետ՝ լապտերով

նշանակած, կամ այդպիսին պետք է նշանակել լուսատու ժամացույցի, կամ կողմնացույցի, կամ ուրիշ առարկաների ոգնութեամբ, վոր պետք է ծառայեն վորպէս նշադրման կետ:

3) Հրաձգութեան բոլոր տվյալները պետք է գրի առնել:

Գիտելիա աշխատանքը. ստուգել ցերեկվա տվյալները և անցնել հրաձգութեան:

II Դեպք. գնդացիքը պատրաստված է գիշերային հրաձգութեան համար ցերեկը, բայց հետո գնդացիքը վերցվել է ուրիշ աշխատանքների համար և մութն ընկնելիս նորից պետք է բերվի:

Ցերեկվա աշխատանքը. գնդացիքը վերցնելուց առաջ պետք է նշանակել գնդացրի անիվների և կնճիթի տեղերը, վորից հետո գրի առնել բոլոր տվյալները, ապա գնդացիքը վերցնել, նորից լավ նշանակել անիվների ու կնճիթի տեղերը և սրանով վերջացնել:

Գիտելիա աշխատանքը. ամբացնել գնդացիքն այնտեղ, վորտեղ ցերեկը գրված է լեղել, և նախորդը գրված տվյալներով գնդացրի փողն ուղղել նպատակին:

III Դեպք. գնդացիքը դրվում է դերժում գիշերը, իսկ նախապատրաստական աշխատանքը կատարվում է ցերեկը:

Ցերեկվա գործողությունը. ճիշտ այն կետում, վորտեղ պետք է լինեն գնդացրի անիվներն ու կնճիթը, պետք ձողեր տնկել ևս մի ձող տնկում են այնտեղ, վորտեղ պետք է լինի լապտերը. հորիզոնական նշանառութեան համար չափում են հորիզոնական անկյունները. վորտեղում են Ա(գն) և այսպիսով վերջացնում են այդ աշխատանքները:

IV դեպք. Գնդացիքը հաստվում է դերժում գիշերը և բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարվում են գիշերը:

Այս ձևը հնարավոր է այն դեպքում, լերը ունենք այդ վայրի ճիշտ քարտեզը. այս դեպքում ոգնող կետ չի կարող լինել, վորովհետև չգիտենք նշանի ճիշտ ուղղութիւնը. ուստի գնդացրի փողը նպատակին ուղղելու համար պետք է ոգտվել կողմնացույցով. այդ միակ միջոցն է:

Գնդացրի փողը հորիզոնական ուղղութեամբ նպատակին կարելի չէ ուղղել հետևյալ ձևով:

1. Անկյունաչափի ոգնութեամբ այն լեղանակներով վոր կատարվում են ցերեկը. սակայն այն տարբերութեամբ, վոր նշանառութեան կամ նշադրման կետը լինում է մոտ 20-25 մետրի վրա լապտերների ագնութեամբ նշանակած: Լապտերի փոխարեն կարելի չէ գործադրել հետևյալ լեղանակը. ելեկտրական հոսանքի միջոցով պետք է պատրաստել 4 հատ հեռախոսի ելման և այդ ելմանները պահել գնդացրի մոտ. այդ ելմաններին պետք է մի լար քաշել (հեռախոսի) 20-25 մետր լերկաբութեամբ այնտեղ, ուր վոր հարմար է ունենալ նշադրման կետը. այդ նշադրման կետի տեղում, մի փոքր տուփի մեջ (վոր բոլոր

կողմերից ծածկված է, բացի այն կողմից, վոր դարձված է դեպի գնդացիքը) պետք է հազցնել մի փոքր լամպակ (5-10 մոմանոց). այդ քաշած լարը պետք է միացնել լամպակի հետ և ցանկալի բողբոջին կարող ենք լույսը վառել ու հանգցնել. այդ չորս ելմաններով մենք կարող ենք 5-8 գիշերային հրաձգութեան անցկացնել:

2. Բուստի ոգնութեամբ.


3. Շրջադարձ հարթակի միջոցով. վոր մի փայտե սեղան է, դրա վրա հաստած գնդացիքը պտույտ է դալին 360° հորիզոնական ուղղութեամբ. Այդ շրջադարձ հարթակի յեղը բաժանված է կամայական, բայց միմյանց հավասար մասերի և յուրաքանչյուր բաժանման վրա արված է մեկական ծակ, վորի մեջ մեխ են հաղցնում փողի դարձումը սահմանափակելու համար:

4. Փայտի ոգնութեամբ.

5. Կրի միջոցով սլաքներ են պատրաստվում նշանի ուղղութեամբ, գնդացրի փողի առջև և դրանք համարակալվում են ըստ նշանների համարների:

ՈՒՂՂԱՁԻԳ ՆՇԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԵԼԻ ՅՆ ԿԱՏԱՐԵԼ ԷՆՏԵՎՅԱԼ ՄԻՉՈՑՆԵՐՈՎ

1. Հարթաչափի ոգնութեամբ:
2. Տրանսպորտի (անկյունաչափի) միջոցով, այս ձևով գնդացիքը պետք է ուղղել նպատակին, ամբացնել մեխանիզմները, վորից հետո տրանսպորտի տրամագիծը պետք է միացնել շրամբարի տակի կողմին և տեսնել, թե ուղղաձիգ լարն ինչ թվի վրա լե կանգնում. այդ կլինի նշադրումն ուղղաձիգ նշանառութեան համար:




Գծանկ. 138.

3. Լապտերի ոգնությունը. նշանառութեան գծի ուղղութեամբ պետք է մի լապտեր դնել, նշան բռնել նշանին, փակել մեխանիզմները և հետո բարձրացնել նշանոցն այնքան, վոր նշանառութեան գիծը հանդիպի լապտերին. դա կլինի այն նշանոցը, վոր պետք է դնել տվյալ նշանը հարվածելու համար:

4. Աստիճանավոր սահողութեի միջոցով, վոր հայտնի լե գնդացրի գնդերին:

Նպատակը հարվածելու հավանակութունն ավելացնելու համար, անհրաժեշտ է կրակել մարտկոցով, և այդ պետք է կատարել անկյունա-հարթաչափի ոգնությամբ (գծանկ. 139), կամ առանց անկյունա-հար-թաչափի (յեթե նշանները յերևում են բոլոր գնդացիներին), այս դեպքում բոլոր գնդացիները, նշանոցը դնելով ըստ հեռավորության,



Գծանկ. 139.

նշան են բռնում նպատակին և լայտերի ոգնությամբ գտնում են, թե թե՛ նշանոց է հարկավոր գեղերը կրակելու համար այն, ինչ վեր առված է 3-րդ կետում:

Գ Լ Ո Ւ Խ XVI

ՀՐԱՄԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՂԱՆՇԵՏԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ


Հրամատարի աշխատանքը դիտարկելու, Յերբ զուգահեռ հովհար է կազմված, վորպես նշաղբման կետ ծառայում է հիմնական որիենտիրը, հրամատարն ընտրում է տեղանքում մի այնպիսի որիենտիր, վոր տեսանելի լինի հրամատարին իրեն և հիմնական գնդացիին:

Հրամատարը պլանշետի վրա նշանակում է իր կանգնած կետը. կանգնած կետը պլանշետի վրա պետք է ընտրել այն հաշվով, վոր ընդունված մասշտաբով պլանշետի վրա տեղավորվի հիմնական որիենտիրը, գնդացիները և այլն: Պլանշետի վրա կանգնած կետը պետք է նշանակել ձախ և ներքևի անկյունում, յեթե մարտկոցն ու որիենտիրը գտնվում են հրամատարից դեպի աջ և ընդհակառակը, յեթե հիմնական որիենտիրն ու մարտկոցը գտնվում են հրամատարից դեպի ձախ, պետք է ընտրել ներքևի աջ անկյունում:


Հրամատարը կանգնած կետում պլանշետի վրա տնկում է մի գնդա-անդ, այս գնդասեղի շուրջը գծում է մի փոքրիկ շրջան և գրում «հր»: Այդ կետում դնում է տարադիրտական քանոնը, տարադիրտում է հիմ-նական որիենտիրին և քանոնի ներքի յեղրից քաշում է մի բարակ նական որիենտիրին և քանոնի ներքի յեղրից քաշում է մի բարակ գիծ, այդ գծի ծայրին գրում է հիմնական որիենտիր «հ. որ»: Դրա-նից հետո, առանց պլանշետը խախտելու, տարադիրտում է գնդացիին, նից հետո, առանց պլանշետը խախտելու, տարադիրտում է գնդացիին, քաշում է մի գիծ և ծայրին գրում է հիմնական գնդացի «հ. գ»:

Հրամատարի այս աշխատանքը կատարելիս, հեռաչափողը հայտ-նում է որիենտիրի և բաղաչի հեռավորությունները: Յենթադրենք՝ հեռաչափողը հայտնեց հիմնական որիենտիրի հեռավորությունը—2600 քայլ և բաղաչի հեռավորությունը—500 քայլ:

Հրամատարն ընդունված մասշտաբով նշանակում է այդ հեռավո-րությունները քաշած գծերի վրա և գտնում է որիենտիրի ու գնդացիի տեղը պլանշետի վրա (գծանկ. 140):



Գծանկ. 140.



Գծանկ. 141.

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ. Ամենահարմար մասշտաբը, պլանշետի վրա աշխատելիս, մի սանտիմետրում 200 քայլն է:

Դրանից հետո հրամատարը միացնում է գնդացիին կանգնելու կետը հիմնական որիենտիրի հետ (գծանկ. 141) և ընդունված մաս-շտաբով չափում է հեռավորությունը գնդացիից մինչև որիենտիրը, վոր աղյալ որիենտիրում հավասար է—2800\*:


ՄԱՆՈՒԹՅՈՒՆ. Որիենտիրի և գնդացիի միացնող գիծը հանդիսանում է գնդացիի համար հաշիվները:

այդ գծից են կատարվում բոլոր հաշիվները:


Յենթադրենք, թե հրամատարն սպասում է հակառակորդի լերեա-լուն առանձին ծառի ուղղությամբ. հրամատարը հրամայում է հեռա-չափողին չափել առանձին ծառի հեռավորությունը և ինքը, պլանշետը կողմորոշիլուց հետո (այսինքն՝ պլանշետի վրայի գծերը տեղանքի հետ զուգահեռ դարձնելուց հետո), տարադիրտում է առանձին ծառին և մի գիծ է քաշում (գծանկ. 142):

Միաժամանակ հեռաչափողը հայտնում է մինչև առանձին ծառը

չեղած հեռավորութիւնը—2600 քայլ: Հրամատարը միացնում է զ՝  
 դացրի կանգնած կետը № 1 որիննտիրի կամ առանձին ծառի հետ  
 ընդունված մասշտաբով չափում եւ այդ հեռավորութիւնը (գծանկ. 142)




Գծանկ. 142.



Գծանկ. 143.

Դիտողը հայտնեց, վոր առանձին ծառից (որ № 1) 0—20 դեպ  
 աջ գտնվում է հակառակորդի ծանր գնդացիքը, հրամատարը վճռում  
 հարվածել այդ նշանը: Մարտկոցին համապատասխան հրաման տալու  
 համար մնում է միայն չափել հիմնական որիննտիրի և № 1 որիննտիրի  
 ըրի միջև լեղած անկյունը, զրա համար ցելուլոլիդի բոլորակի կենտրոն  
 նը գնում է գնդացրի կանգնած կետում և բոլորակի 30—00 ուղղում հիմն



Գծանկ. 144.

դեպի ձախ գտնվում է հակառակորդի հրամատարական դիտակետը՝  
 Հրամատարը ցելուլոլիդի բոլորակի ոգնութիւնը չափում է գնդացիք—  
 հիմն. որ. և գնդացիք—որ. № 2-ի միջև լեղած անկյունը, յենթադրենք,  
 հավասար է 2—60 (գծանկ. 145): Հրամատարը հրաման է տալիս  
 մարտկոցին՝ ամսկյունաչափը 27—00 (30—00—2—60—0—40) ուղղել


նական որիննտիրին, ապա վոր  
 բոշում է, թե գնդացիք—№ 1 որ.  
 գիծը բոլորակի վրա ինչ անկյան  
 դիմաց է ընկնում. մեր որիննտիրում  
 այդ անկյունը=4—20, Հրամատարն  
 այդ անկյունը չափելուց  
 հետո հրաման է տալիս մարտկոց  
 կոց՝ ամսկյունաչափը 34—40  
 (30—00+4—20+0—20) ուղղել  
 հիմնական որիննտիրին: Այս  
 հրամանից հետո հիմնական գնդացրի  
 փողն ուղղված կլինի  
 պատակին:

Յենթադրենք, թե № 1 նշանը  
 հարվածելուց հետո դիտողը  
 հայտնեց, վոր որ. № 2-ից 0—40

հիմնական որիննտիրին, և այս հրամանից հետո գնդացրի փողն  
 ուղղված կլինի նպատակին:


Մի ուրիշ որիննտիրի հիմնական որիննտիրը  
 գտնվում է դեպի ձախ և յետ:

Հրամատարը հրամայում է դիրքերի  
 ավազին կազմել զուգահեռ հովհար. հա-  
 վանական նշանի ուղղութիւնը և նշանադ-  
 ընդ դեպի ձախ և յետ գտնվող ծառին: Այս  
 կարգադրութիւնից հետո հրամատարը վե-  
 բոնիշյալ յեղանակով վորոշում է մարտկոցի,  
 հիմնական որիննտիրի և մյուս որիննտիր-  
 ընդի տեղերը պլանշետի վրա (գծանկ. 146  
 և բ): Յենթադրենք, թե հրամատարը տե-  
 ղեկութիւն է ստանում, վոր հակառակորդը




Գծանկ. 145.

կուտակվում է գերեզ-



Գծանկ. 146ա.


մանատանը, և անհրաժեշտ է շտապ կրակ բանալ այդ տեղի վրա Հրա-  
 մատարը, ցելուլոլիդի բոլորակի  
 կենտրոնը գնելով գնդացրի  
 կանգնած կետում, բոլորակի  
 30—00 ուղղում է որ. № 2-ին և  
 նայում է, թե հիմնական որինն-  
 տիրի գիծն ինչ անկյան դիմաց  
 է կանգնում. այդ մեր որիննտ-  
 կում=43—20:



Գծանկ. 146բ.

Հիմա տեսնենք, թե ինչպիսի  
 աշխատանք է տարվում դիրքում:  
 Դիրքերի ավազը կազմում է  
 հովհար՝ հիմնական նպատակի  
 ուղղութիւնը: Հիմնական գնդաց-

ցրին հրամայում և նշադրել զեպի ձախ և յետ գտնվող հիմնակ-  
որինաւորին (հրամատարին նշանադրելու փոխարեն): Յենթադրենք  
թե նշադրումը հիմնական որինաւորին հավասար է=51—80:




Գծանկ. 147.

սովորական լեղանակով, վոր բացատրված է նախորդ գլուխներում:

Հրամատարի աշխատանքը դիտակետում, յերբ գուգանեռ հովնար է  
կազմված յեվ, վորպես նուգուման կես, ընդունված է հրամատարի դիտա-  
կետը:

Այս դեպքում կատարվում է այն, ինչ ասված էր վերևում  
գնդացրի, որինաւորի, դիտակետի տեղերը քարտեզի վրա վորոշելու  
համար և նույն յեղանակներով:

Հրամատարը հայտնում է զիրքի  
ավագին՝ զուգահեռ հովնար կազմել  
հավանական նպատակի ուղղությամբ,  
նշադրման կետ ունենալով իրեն  
դիտակետը, հիմնական որինաւորի փո-  
խարեն մարտկոցի համար նշադրման  
կետ ծառայում է հրամատարի դիտա-  
կետը, վորպես հիմնական որինաւորի:  
(գծանկ. 148):



Գծանկ. 148.

Հրամատարի կողմից ավանդները  
պատրաստվելուց հետո, դիտողը հայտ-  
նեց, վոր հակառակորդի ծանր գնդա-  
ցիրը գտնվում է № 2 որինաւորի  
մոտ. հրամատարը վճռում է հարվածել այդ նշանը (գծանկ. 149):

Իրա համար ցելլուլոիդի բոլորակի կենտրոնը ղնում է գնդացրի  
կանգնած կետում և 30—00 ուղղում, որ. № 2-ին ու կարգում հրամա-  
տար—գնդացրի գծի վրա 37—70:

Հրամատարը հրաման է տալիս՝ ըմարտկոց, անկյունաչափը


37—70 ուղղել ինչպէս: Այս հրամանից հետո մարտկոցն ուղղված կլինի  
նպատակին:

Հրամատարի աշխատանքը դիտակետում, յերբ գուգանեռ հովնար է  
կազմված, յեվ նուգուման կետը գտնվում է դեպի հյուսիս (կողմնացույցի  
ոգնուրյամբ):

Այս ձևը կիրառվում է այն ժամանակ, յերբ հրամատարին և գնդ-  
ացրին տեսանելի հիմնական որինաւորի չկա և, բացի այդ, հրամատա-  
րը չի տեսնում մարտկոցը, բայց դիտի մարտկոցի մոտավոր ուղղու-  
թյունը:

Հրամատարի աշխատանքը դիտակետում

Դնում է կողմնացույցը պլանշետի վրա (բավական մեծ ճշու-  
թյուն ստանալու համար անհրաժեշտ է բոլոր յերկաթի և պողպատի  
էրերը հեռացնել կողմնացույցից 10—15 քայլ հեռավորության վրա),  
մագնիսային սլաքը հանգստացնելուց հետո, հարավ-հյուսիս արամագծի  
մագնիսային սլաքը հանգստացնելուց հետո, հարավ-հյուսիս արամագծի  
ուղղությամբ տեղանքում գտնվում է մի ստարկա. մեր որինաւորում գա-  
տանալին ծառն է, և այդ ուղղությամբ պլանշետի վրա քաշում է մի  
գիծ (գծանկ. 150):




Գծանկ. 149.

Գծանկ. 150.

Իրանից հետո հրամատարը նշանակում է իր կանգնած կետը  
պլանշետի վրա (քաշած գծի վրա մի վորեհ տեղում կամայականորեն  
վերցրած). քաշած գիծը կոչվում է հիմնական գիծ, վոր և կոչվում է  
հրամատարի հյուսիս:

Սրանից հետո հրամատարը, պլանշետը կողմորոշելուց հետո, տա-  
րադիտում է գնդացրի ուղղությամբ և ընդունված մասշտաբով գրա-  
նում է գնդացրի կանգնած կետը պլանշետի վրա. գնդացրի կանգնած


կետից հրամատարը տանում և մի զուգահեռ գիծ, վորը կլինի զուգահեռ հրամատարի հյուսիսի գծի հետ. այդ գիծը կոչվում և գնդացրի հյուսիս (գծանկ. 151):



Գծանկ. 151.

բաղիտում և այդ որիենտիրների ուղղություններին և քաշում և բարակ դծեր. ապա ընդունված մասշտաբով գտնում և որիենտիրները տեղերը պլանշետի վրա:

Իրանից հետո հրամատարը միացնում և գնդացրի կանգնած կետն այդ յերեք որիենտիրների հետ (գծանկ. 153):



Գծանկ. 152.

Գծանկ. 153

Սրանով վերջանում և հրամատարի աշխատանքի 1-ին ետապը. Յենթադրենք թե հրամայված և սվյալ ներ պատրաստել հետևյալ որիենտիրների ուղղությամբ. № 1 որ. առանձին տուն. № 2 որ. յերկաթի կամուրջ և № 3 որ. անտառի աջ անկյունը (գծանկ. 152):

Հրամատարը, պլանշետը կողմորոշելուց հետո, տա-

Հիմա անհրաժեշտ և կրակը կենտրոնացնել № 1 որիենտիրի վրա. զրա համար հրամատարը ցելուլոիդի բոլորակի կենտրոնը դնում և գնդացրի կանգնած կետում, 30—00 ուղղում և որիենտիր № 1. ին և կարգում և այն անկյունը, վոր կազմված և 30—00-ի և գնդացրի հյուսիսի գծի միջև, այս որիենտիրում հավասար և 22—40, այս կարգով սվյալներ և պատրաստում մյուս որիենտիրների համար:

Այս բոլորն արվում և գնդացրը հորիզոնական ուղղությամբ նպատակին ուղղելու համար, իսկ ուղղաձիգ նշանառության համար գնդացրին ուղղում և վերևում հիշված կանոններով:


Հրամատարի դիտակետում տարած աշխատանքի հետ միաժամանակ, աշխատանք և տարվում նաև մարտկոցում (գիրքերի ավազի կողմից):

Հրամատարը, սովորական ձևով կարգադրություններ անելուց հետո, հիշեցնում և ղերքերի ավազին կազմել զուգահեռ հովհար, նշադրելով դեպի հյուսիս. այս դեպքում ղերքերի ավազի պարտականությունը հետևյալն և.


Իրեքերի ավազը, հիմնական գնդացրի տեղն ընտրելուց հետո, կողմնացույցը դնում և այդ կետում. մագնիսային տեղանքում գտնում և մի վորև և սլաքը հանգստացնելուց հետո, տեղանքում գտնում և մի վորև և կարելի յե այդ ուղղությամբ մի ձող տնկել. յենթադրենք, հյուսիսի ուղղությամբ տեղանքում գտնվում և մի առանձին ծառ:

Իրեքերի ավազը, գնդացրի հյուսիսը գտնելուց հետո, կողմնացույցի տեղում տրնկում և մի ձող, վորից հետո դնում և զրնդացրին այնպես, վոր անկյունա-հարթաչափի կենտրոնը լինի ուղիղ ձողի տեղը: Այս աշխատանքից հետո ղերքերի ավազը կազմում և զուգահեռ հովհար սովորական ձևով, նշադրման կետ ընտրելով այն տարական, վոր գտնվում և գնդացրի հյուսիսի ուղղությամբ:

Հիմնական գնդացրի նշադրումը դեպի հյուսիս=22—10, այս նշադրումն ստանալուց հետո, գծանկ. 155-ից պարզ յերևում և, վոր հովհարը կազմված և հյուսիսի գծից 7—90 դեպի ձախ. սրանով վերջանում են ղերքերի ավազի աշխատանքները:



Գծանկ. 154.



Գծանկ. 155.

Հրամատարը ցանկանում է հարվածել յերևոցող նշանը. այդ նշանի ուղղութեամբ նախորոք պատրաստի ավյալներ ունենալով հրաման է տալիս՝ «անկյունն չափը 19—50, ուղղել զեպի հյուսիս»:

Իրքերի ավազը, հրաման ստանալով՝ «անկյունն չափը 19—50» է նկատի ունենալով, վոր հիմնական գնդացրի նշադրումը դեպի հյուսիս = 22-10, դատում է այսպես. յեթե նա հրամատարից ստանար «անկյունն չափը 22-10», ապա հիմնական գնդացրին ուղիղ նայելիս կլիներ զեպի նպատակը. բայց ստացել է «անկյունն չափը 19-50»: Հետևապես, հովհարը պետք է դարձնել 26-50 դեպի ձախ.

$$(22-10-19-50=2-60),$$

Իրքերի ավազը հրաման է տալիս՝ «հովհարը դեպի ձախ 2—60»: Հովհարը դարձնելուց հետո, մարտկոցն ուղղված կլինի նպատակին:


ՇԱՆՈՒՅՈՒՅՈՒՆ. Պլանշետով կրակ վարելու բաժնում հարթաչափի մասին խոսք չի լեղել, վորովհետև ավյալներ պատրաստելը նույնն է, ինչ վոր նախորդ գլուխներում:

Գ Լ Ո Ւ Ն XVII

ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՒՄԸ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ, ՅԵՎ ԱՌԱՆՑ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

Պլանշետի վրա անկյուններ կարելի չէ չափել վոչ միայն ցելուրիդի բոլորակի ոգնութեամբ, այլև ուրիշ լեղանակներով:

I. Ստանց գործիքի: Անկյան գազաթից լերկու կողմերի վրա նշանակում են կամայական մասշտաբով 10-ը հավասար մասեր (գծանկ. 156):



Գծանկ. 156.

Այդ միջին կետերը միացնում են միմյանց հետ և չափում այդ կետերի միջև լեղած հեռավորությունները նույն կամայական մասշտաբով, ինչպես ասված էր վերևում. այս վերջին ստացված թիվը պետք է բազմապատկել 100 ով է ստացածը կլինի անկյան մեծութուն՝ արտահայտված հազարերորդականներով: Մեր որինակում գծանկարի վրա լերկու կետերի հեռավորության վրա տեղավորվում է 5 մաս հետևապես, անկյունը =  $5 \times 100 = 5-00$ :

II. Կարերի (քորդաների) աղյուսակների ոգնութեամբ:

Այս լեղանակը հիմնված է հետևյալի վրա: Անկյունը չափվում է իր համապատասխան աղեղով և, հետևապես, իր համապատասխան լարով:

Սա բխում է ներքոհիշյալ թեորեմաներից.

1. Մի շրջանի մեջ յեթե աղեղները հավասար են, ապա նրանց ձգող լարերը նույնպես հավասար են և հավասարապես հեռացված կենտրոնից:

2. Կենտրոնից հավասարապես հեռացված լարերը հավասար են և ձգում են հավասար աղեղներ:

3. Յուրաքանչյուր անկյանը համապատասխանում է (վորոշ շառավիղի զեպում) խիստ վորոշ մեծութեամբ լար:

Կարերի աղյուսակը կազմված է հետևյալ Ֆորմուլայով.

$$AB \text{ լարը հավասար է } AB = 2R \sin \frac{\alpha}{2}$$

Անկյուններ կառուցելու և չափելու համար ոգտագործում են լարերի աղյուսակը (աղ. № 6), վորի շառավիղը «R» ընդունված է 1000 կամայական միավոր. լարի մեծութունն արտահայտվում է շառավիղի հազարերորդական մասերով և անկյուններն արտահայտվում են անկյունն չափի բաժանումներով:



Գծանկ. 157.

Այսպես, որինակ՝ 9—50 անկ. բաժ. անկյան լարը համապատասխանում է 954-ի, վորը նշանակում է, վոր տվյալ լարը հավասար է շառավիղի  $\frac{954}{1000}$  մասին: Անկյուններ կառուցելու մասշտաբը կարող է կամայական լինել և քարտեզի կամ պլանշետի վրա ընդունված մասշտաբից վոչ մի կախում չունի: Գործնականում, անկյուններ կամ մասնաչափի. նկատի ունենալով, վոր 4 մասնաչափը = 1000 միավորի, մասնաչափի. նկատի ունենալով, վոր 4 մասնաչափը = 1000 միավորի, ապա մի մասնաչափը կլինի = 250 միավորի: Որինակի համար, լարի մեծութունը 9—50 անկ. բաժ. ստանալու համար, վոր հավասար է 954-ի, պետք է վորոշել խոտորնակի մասշտաբի ոգնութեամբ 954 միավորի մեծութունը. յեթե խոտորնակի մասշտաբի մեծութունը 250 միավոր մի մասնաչափում, այս զեպում հրամատարի ընդունենք 250 միավոր մի մասնաչափում, այս զեպում հրամատարի չափում 250 սաժ. մասշտաբի քարտեզի կամ պլանշետի վրա աղյուսակիս:

Որինակ. Պետք է գտնել 12—20 անկյանը համապատասխանող լարը. դրա համար հորիզոնական սյունակից 0—20-ի և ուղղաձիգ սյունակից 12-ի հատման կետում պետք է կարգալ համապատասխան լարը 1192.

Պետք է գտնել 8—79 անկյանը համապատասխանող լարը.

$$8-70=880$$

$$8-79=880+9=889$$

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յերբ սովյալ անկյունն աղյուսակում չկա, պետք է աղյուսակում գտնել նրա մոտակա փոքր անկյունը և մնացորդը զուևարել ստացված լարի հետ. մեր օրինակում զուևարեցինք 9, վորովհետև 8—79 . 8—70=0.09:

Պահանջվում է գտնել անկյունը, յերբ աղյուսակում լարը=765. անկյունը=7—50:

Պետք է գտնել անկյունը, յերբ լարը հավասար է 967, աղյուսակում մոտակա 963 լարին համապատասխանում է 9—60 անկյունը.


$$967-963=4$$

$$967=9-60+0-04=9-64$$

### ԿԱՌՈՒՑԵԼ ՏՎՅԱԼ ԱՆԿՅՈՒՆԸ

Որինակ. ԱԲ աղեղի վրա (գծանկ. 158) Ա կետում կառուցել 3—80 անկյունը.

1. Ա կետից, վորպես շրջանագծի կենտրոնից, ճիշտ 4 մատնաչափ շառավիղով գծում են ԲԳ աղեղը:



Գծանկ. 158.

2. Լարի աղյուսակում գտնում են, վոր 3—80 անկյան լարը=395:

3. Բ կետում 395 միավորի շառավիղով, մեկ մատնաչափում 250 միավոր մասշտաբով հատում են ԲԳ աղեղը Գ կետում:

4. Միացնում են Ա և Գ կետերը և ստանում են  $\angle$ ԳԱԲ=3—80:

Չափել անկյունը, յերբ անկյունը տրված է գրաֆիկ ձևով:

Որինակ. Գտնել  $\alpha$  անկյան մեծությունը, վոր արված է գրաֆիկ ձևով (գծանկ. 158):

1. Ա կետից, վորպես շրջանագծի կենտրոնից, ճիշտ 4 մատնաչափ շառավիղով գծում են ԲԳ աղեղը:

2. Կարկինի միջոցով չափում են ԲԳ լարը:


3. Ստորոնակի մասշտաբի ոչնությամբ գտնում են ԲԳ լարի մեծությունը (395):

4. Լարերի աղյուսակում 395 լարով գտնում են  $\alpha$  անկյան մեծությունը=3—80:

Բուք անկյան կառուցումն ու չափումը

15—00-ից ավելի մեծ անկյան համար լարերի աղյուսակում չկա լարի մեծությունը, դրա համար, յեթե կարիք լինի կառուցել կամ չա-

փել բուք անկյունը, ապա կառուցում են սրան կից սուր անկյունը (մինչև 30—00 լրացուցիչ անկյունը): Այս դեպքում, աշխատանքը հեշտացնելու համար, պետք է ոգավել աղյուսակի աջ կողմի ուղղաձիգ սյունակից և ներքևի հորիզոնական սյունակից:



Գծանկ. 159.

Այսպես՝ 982 լարը համապատասխանում է 9—80 անկյանը (30—00—20—20), բայց վոչ յերբեք 20—20 անկյանը:

Ուղեցույց. ԱԲ ուղիղի վրա (գծանկ. 158) Գ կետում կառուցել 25—50 անկյունը:

1. Գ կետից, վորպես շրջանագծի կենտրոնից, ճիշտ 4 մատնաչափ շառավիղով գծել են Դ աղեղը:

2. Լարի աղյուսակում գտնում են մինչև 30—00 լրացուցիչ անկյան լարը (4—50), վոր =467:

3. Ե կետից ճիշտ 467 միավոր շառավիղով ընդունված մասշտաբով հատում են աղեղը Դ կետում:

4. Միացնելով Գ և Դ կետանանք ԳԴ անկյունը=25—50:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բուք անկյունը չափելը հանգում է այն հարցին, վոր պետք է չափել լրացուցիչ սուր անկյունը, ինչպես ասված էր գծանկ. 158 վերաբերմամբ:

Ա. Ա և կյան չափումն ու կառուցումը լար-անկյունաչափի ոգնությունը

Լար-անկյունաչափն իրենից ներկայացնում է արծաթափայլ թիթեղ, վորի մի կողմում գծված է լարի մասշտաբը, իսկ մյուս կողմում՝ ճեղիկ խոտորնակի մասշտաբը, մեկն արտահայտված մատնաչափերով, իսկ մյուսը՝ սանտիմետրերով:

Լար-անկյունաչափը պարունակում է իր մեջ և՛ լարի աղյուսակը և՛ խոտորնակի մասշտաբը, վոր հնարավորութուն է տալիս, առանց մի վորևեթ թվահաշիվ կատարելու, միանգամից գտնել լարի մեծությունը:


Լար-անկյունաչափի վրա վերևի և ներքևի հորիզոնական գծերի մոտ գրված են խոշոր թվանշաններ՝ 1 2, 3 . . . . 15, 30, 29, 28 . . . .

15, վոր համապատասխանում են 1—00, 2—00, 3—00 . . . . 15—00, 30—00, 29—00, 28—00 . . . . 15—00 անկյուններին:

Հորիզոնական գծերի վրա գտնվող փոքր թվանշանները (2, 4, 6, 8) համապատասխանում են 0—20, 0—40, 0—60, 0—80. անկյուններին, իսկ աջ ու ձախ ուղղաձիգ սյունակների թվանշանները համապատասխանում են 0—01, 0—02, 0—03 . . . 0—20 անկյունաչափային բաժանումներ ունեցող աշկյուններին (գծանկ. 160).

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 10—00 անկյանը համապատասխանող լարը միևնույն ժամանակ հանդիսանում է վորպես անկյուն կառուցելու շառավիղ:

Որինակ 1. Տրված է 6—60 անկ. բաժ. ունեցող անկյուն, պահանջվում է գտնել լարի մեծությունը: Իրա համար կարելի է մի մատը դնում են վերին հորիզոնական գծի վրա «0» կետում, իսկ մյուսը դնում են նույն գծի վրա. ապա կարելի է տանում են դեպի վեր, կամ վար՝ մինչև թեք և հորիզոնական գծերի հատումը, տվյալ որինակում մինչև 5 կետը, վոր գտնվում է 6 և 7 թվանշանների միջև. այդ կետը նշանակված է փոքրիկ սպիտակ շրջանով (գծանկ. 159). կարելի է բացվածքն իրենից ներկայացնում է լարի մեծությունը, 6—60 անկյանը համապատասխան:



Գծանկ. 160.

Որինակ 2. Տրված է 8—44 անկ. բաժ. անկյուն, պահանջվում է գտնել լարի մեծությունը: Իրա համար կարելի է մի մատը պետք է դնել ձախ ուղղաձիգ սյունակի «4» թվանշանի վրա, իսկ մյուսը՝ հորիզոնական գծի վրա և տանել վեր, կամ վար, մինչև թեք ու հորիզոնական գծերի հատումը, վոր նշանակված է «4» փոքր թվանշանի գծի վրա (8 և 9 մեծ թվանշանների միջև). այդ կետերը նշանակված են փոքրիկ սև շրջագծով:

Որինակ 3. Տրված է 4—75 անկ. բաժ. անկյունը, պահանջվում է գտնել լարի մեծությունը: Այն կետերը, վորոնց վրա պետք է դրված լինեն կարելի է մատները, նշանակված են փոքրիկ սատղով:

Որինակ 4. Տրված է 22—80 անկ. բաժ. անկյունը, պահանջվում է գտնել լարը: Իրա համար գտնում ենք մինչև 30—00 լրացուցիչ անկյան լարը, այսինքն (30—00—22—80)=7.20. Այնտեղ, վորտեղ պետք է դրված լինեն կարելի է մատները, նշանակված են խաչաձև գծիկներով:

Լար-անկյունաչափի ոգնությունը, անկյունները չափելու համար, պետք է կատարել հետևյալ գործողությունները:

1. Չափվող անկյան զազաթից—Ա կետից (գծանկ. 158) ճիշտ 10—00 անկյան համապատասխան լարի մեծությամբ շառավիղով (լար-անկյունաչափից վերցված) գծում են մի շրջանագիծ:


2. կարելի է ուղի վերցնում են ԲԳ լարի մեծությունը:  
3. ԲԳ լարի մեծությունը, վոր արտահայտված է բացված կար-կլինի մեծությամբ, դնում են լար-անկյունաչափի վրա և գտնում են անկյան մեծությունը, արտահայտված անկյունաչափային բաժանումներով:

Լար-անկյունաչափի ոգնությամբ անկյուններ կառուցելը կատարվում է հակառակ կարգով:

1. կարելի է ուղի վերցնում են 10—00 անկյան լարը և Ա կետից գծում ԲԳ աղեղը (գծանկ. 158);
2. Լար-անկյունաչափից վերցնում են 3—80 անկյան լարի մեծությունը և Բ կետից հատում ԲԳ աղեղը «Գ» կետում:
3. Միացնում են Ա և Գ կետը. ստանում են  $\angle ԳԱԲ$  անկյունը, վոր կլինի վորոնելի անկյունը:

IV. Տվյալ անկյան կառուցումն այդ անկյան քիմուսի ոգնությամբ

Այս լեղանակը կրկնված է հետևյալ ֆորմուլայի վրա՝  $a:c = \sin a$  (գծանկ. 161): Այս նպատակի համար ավելի հարմար է c-ի մեծու-




Գծանկ. 161.

թյունը (կամայականորեն) վերցնել 10 միավոր, վոր  $= 2R$ : Գծել մի շրջանագիծ, վորի շառավիղը  $= 5$  միավորի. B կետից նշանակել a մեծությունը (վոր  $= a = c = 2R \cdot \sin a$ ) շրջանագծի վրա և շրջանագծի վրա ստացած կետը միացնել A կետի հետ. ստացածը կլինի վորոնելի անկյունը:

Որինակ. տրված է 5—00 անկյուն, պահանջվում է կառուցել այդ անկյունը պլանշետի վրա:  
 $5—00$  անկյան սինուսը  $= 0,5$   
 $a = c \sin a = 2 R \sin a = 10 \cdot 0,5 = 5$ :

Գծել մի շրջանագիծ ճիշտ 5 միավոր շառավիղով. B կետից նշանակել 5 միավոր մինչև շրջանագծի հատելը և այդ C կետը միացնել A-ի հետ, այդ ստացած անկյունը կլինի վորոնելի անկյունը  $= 5—00$ .  
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պլանշետի կամ քարտեզի վրա անկյուն-

Ներ կազմելու կամ չափելու, անհրաժեշտ է գործարել այս վերջին յերեք Ա, III և IV կետերը, վոր բավականին կենտարանն աշխատանքի ճշտությունը:



Գծանկ. 162.

Գ Լ Ո Ւ Խ XVIII

**ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՍԱԼԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ**

Բուսուրը կարելի չէ ոգտագործել վորպես սովորական անկյունաչափ, յերբ հրամատարը տեսնում է մարտկոցը, այս մասն այստեղ բացատրելու կարիք չկա, քանի վոր անկյունաչափով հրաձգության մասին լրիվ կերպով ասված է նախորդ գլուխներում: Այստեղ կբացատրվի այն մասը, յերբ հրամատարը չի տեսնում մարտկոցը և, բացի այդ, չկա հարմար նշադրման կետ: Ահա այստեղ է, վոր պետք է լրիվ կերպով դիմել բուսուրի ոգնությանը (կամ Անդրբանովի կողմնացույցին):

1. Ինչպիսի մարտկոցը գեո չի գրավել գիրքերը, կամ մարտկոցը պետք է գիրքերը հետո գրավի. ուստի հրամատարը կամ առաջավոր հետախուզությունը, հրաձգության համար սվյախներ պատրաստելու համար, կատարում է հետևյալ աշխատանքները:

2. Վորոշում է ուղղումը հրամատարի հեռացման համար. յերբ հրամատարն աջ է գտնվում, այդ ուղղումը պետք է գումարել բուսուրի մեծության հետ և հանել, յերբ հրամատարը ձախ է գտնվում:

3. Բուսուրը գնում է այն կետում, վորտեղ նախատեսվում է հիմնական գնդացրի տեղը:

4. Դիտակետում ստացած բուսուրը (հիմնական գնդացրի տեղում) հաստում է սև սլաքի դիմաց:

5. Նշադրում է նշադրման կետին. ստացած նշադրումը կլինի հիմնական հաստումը հիմնական գնդացրի համար:

II Ինչպիսի մարտկոցը գրավել է գիրքերը և վորոշել է հիմնական գնդացրի բուսուրը:

1. Հրամատարը բուսուրի 30—00 ուղղում է նշանին, ազատելով մագնիսային սլաքի սեղմիչը, կաբղում է բուսուրի մեծությունը սև սլաքի դիմաց:

2. Ուղղում է մտցնում հրամատարի հեռացման համար:

3. Հայտնում է այն բուսուրը, վորով հիմնական գնդացրին ուղղված կլինի նպատակին: Հրամատարը բուսուրը հայտնելուց հետո, մյուս աշխատանքները կատարում է արդեն մարտկոցում հետևյալ ձևերով:

1. Ձև 1. բուսուրը գնում է հիմնական գնդացրի և նշադրման կետի ծածկորդում, գնդացրից 10—15 քայլ հեռավորության վրա:

2. դարձնում է անկյունաչափի շրջանն այնքան, վոր սև սլաքը կանգնի հրամատարի հրամանով նշանակած բուսուրի դիմաց:

3. նշադրում է ընտրած նշադրման կետին, ստացած նշադրումը կլինի հիմնական հաստումը մարտկոցի համար (հիմնական գնդացրի համար):

II Ձև 1. բուսուրը գրված է հիմնական գնդացրից կամ աջ կամ ձախ կողմում, առնվազն 10—15 քայլ հեռավորության վրա:

2. դարձնում է անկյունաչափային շրջանն այնքան, վոր հրամատարից ստացած բուսուրը կանգնի սև սլաքի դիմաց, փակում է անկյունաչափի սեղանը:

3. բացում է տարադիտական խողովակի սեղմիչը, ուղղում է հիմնական գնդացրի ձողին (կամ անկյունաչափին) և կարգում է ցուցիչի դիմացի անկյունը:

4. ստացած անկյունը փոխում է 30—00-ով և այդ վերջին անկյունը հրաման է տալիս մարտկոցին, վերջինս գեպի բուսուրն ուղղելու համար:


5. հիմնական գնդացրերը նշադրել նշադրման կետի համեմատ այդ նշադրումը կլինի հիմնական հաստումը:

**ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԴԱՑՐԻ ԲՈՒՍՈՂԸ ՎՈՐՈՇԵԼԸ**

1. Դիրքերի ավազը բուսուլի տարադիտական խողովակն ուղղում է հիմնական գնդացրին ու փակում է խողովակի սեղմիչը:
2. Կրամաչում է հիմնական գնդացրի նշանառուին նշադրվել բուսուլին:
3. ստացված նշադրումը փոխում է 30—00-ով և ազատելով անհյունաչափի շրջանի սեղմիչը՝ դարձնում է ալաքան, վոր նրա 30—00 կանգնի տարադիտական խողովակի ցուցիչի դիմաց:
4. բաց է թողնում մագնիսային սլաքի սեղմիչը և կարգում է բուսուլի մեծութունը սև սլաքի դիմաց, այդ բուսուլը կլինի հիմնական գնդացրի բուսուլը:

**ՀՈՎՀԱՐԻ ՏԵՆԱՓՈՆՈՒՄԸ ԲՈՒՍՈՂԻ ՈՂՆՈՒԹՅԱՄԲ**

1. Դիրքերի ավազը վորոշել է, վոր հիմնական բուսուլը հավասար է 52—00:
2. Կրամատարը հայտնեց № 1 նշանի բուսուլը՝ 53—40:
3. Դիրքերի ավազը վորոշում է հովհարը դարձնելու մեծութունը՝ վոր = 53—40—52—00 = 1—40:



Գծանկ. 163.

Գետք է այս խնդիրը լուծել հետևյալ հաջորդականությամբ:

1. Ուղղում կատարել կրամատարի հեռացման համար:
2. Մարտկոցին կրաման տալ ճշգրտվել, բուսուլ 55—60:
3. Գնդացրի կանգնած կետում դնել բուսուլը, դարձնել անհյունաչափի շրջանն անջան, վոր մագնիսային սլաքը կանգնի 55—60 դիրքի:

և հովհարը դարձնելու մեծութունը՝ վոր = 53—40—52—00 = 1—40: Նկատել ունենալով, վոր կրամատարի ավազ բուսուլն ավելի մեծ է, ուստի պետք է հովհարը դարձնել դեպի աջ 1—40-ով:

Ուրիմակ 1. Մարտկոցը դեռ դիրք չի գրավել, կրամատարը ցանկանում է, մինչև մարտկոցի դալը, վորոշել մարտկոցի հիմնական հաստումը:

Հրամատարը մարտկոցից ձախ է գտնվում, բուսուլ-նշան ուղղութունը դիտակետից վորոշված է 54—00. նշադրումը հիմնական գնդացրի նախատեսված տեղում հավասար է 6—00. բազան = 700 քայլի: Վորոշել հիմնական հաստումը մարտկոցի համար:

մաց, նշադրել նշադրման կետին, 41—00 նշադրումը հանդիսանում է հիմնական հաստումը:

Ուրիմակ 2. Մարտկոցը գրավել է դիրքերը, կրամատարը չի տեսնում մարտկոցը, պետք է վորոշել մարտկոցի հիմնական հաստումը: Հրամատարը գտնվում է մարտկոցից աջ,  $Z(\text{գն}) = 3400^\circ$ , բազան = 500 քայլի:

1. Վորոշում են բուսուլ-նշան ուղղութունը (53—00),  
 2. նշադրում են մոտավորապես մարտկոցի ուղղութունը (52—00),  
 3. Վորոշում են ուղղումը կրամատարի հեռացման համար 500,0,8:3,4=1—17:


4. Մարտկոցին կրաման տալ՝ բուսուլ-նշան 54—17:  
 5. Մարտկոցի մատերը բուսուլ ավազն 15 քայլի վրա դնել մի բուսուլ:

6. Ազատել անհյունաչափի շրջանը և դարձնել այնքան, վոր սև սլաքը կանգնի 54—17 դիմաց, փակել անհյունաչափը:

7. Ազատել տարադիտական խողովակը, ուղղել հիմնական գնդացրի ձողին և կարգալ տարադիտական խողովակի ցուցիչի դիմաց հաստումը, մեր որինակում = 42—00:

8. Հրաման տալ հիմնական գնդացրին՝ «անհյունաչափը 12—00 ուղղել բուսուլին»:


9. Հիմնական գնդացրի նշադրել նշադրման կետին, ստացած նշադրումը կլինի հիմնական հաստումը, մեր որինակում = 8—00:



Գծանկ. 164.

**ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԴԱՑՐԻ ԲՈՒՍՈՂԸ ՎՈՐՈՇԵԼԸ**

1. նշանառուի նշադրումը հիմնական գնդացրին = 7—00:
2. Բուսուլի տարադիտական փողակի ցուցիչը դնում են 37—00 վրա:
3. Ազատում են մագնիսային սլաքի սեղմիչը և կարգում են սև սլաքի նիմաց հիմնական գնդացրի բուսուլը: Դիրքերի ավազը հիմնական գնդացրի նշանին ուղղելու համար ստացել է բուսուլ 54—00, իսկ հիմնական գնդացրի բուսուլը = 52—00:



Գծանկ. 165.

Դիրքերի ավազը հիմնական գնդացրի նշանին ուղղելու համար ստացել է բուսուլ 54—00, իսկ հիմնական գնդացրի բուսուլը = 52—00, պարզ յերևում է, վոր հիմնական գնդացրի բուսուլը = 52—00, սլաքը յերևում է, վոր հիմնական գնդացրի բուսուլը = 52—00 (54—00—52—00). հիմնական փողը նայում է նշանից դեպի ձախ 2—00 (54—00—52—00). հիմնական

Գնդացրի փողը 2-00 դեպի աջ տալուց հետո, գնդացրի փողն ուղղված կլինի նպատակին:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**—Բուսուլը վերաբերյալ բոլոր խնդիրները հեշտությամբ կարելի չե լուծել Անդրիանովի կողմնացույցի ոգնությամբ: Ավելի լավ կլինի, յեթե կողմնացույցի համար պատրաստենք հատուկ յեռտանի, վորը բավականին կհեշտացնի ալ խատանքները:


Գ Լ Ո Ւ Խ XIX

**ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏԵԶԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ**

**ԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԵՏԸ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ ԳՏԵՆԵԼԸ**

1. Տեղական առարկաների ոգնությունը

1. Յերբ դիտակետը կամ մարակոցը դասավորված են անմիջապես տեղական առարկայի մոտերքում, ապա այդ տեղական առարկայի տեղը քարտեզի վրա կլինի դիտակետի կամ մարակոցի կանգնելու կետը:



Գծանկ. 166.

2. Յերբ կանգնելու կետը գտնվում է կողմորոշ տեղական առարկայից վորոշ հեռավորության վրա, ուստի կանգնելու կետը կարելի չե գտնել հետևյալ յեղանակով.

ա) տեղանքի վրա պետք է չափել մինչև տեղական (Ա) առարկան

յիզած հեռավորությունը.

բ) բուսուլը դնել տեղական (Ա) առարկայի մոտ և գտնել բուսուլի մեծությունը կանգնելու կետի նկատմամբ, յենթադրենք, հավասար է 40-00 (գծանկ. 166).

գ) քարտեզի վրա տեղական առարկայի մոտ (Ա կետում) գծել մագնիսային սլաքի ուղղությունը.

դ) դնել ցելուլոիդի բոլորակի կենտրոնն այնպես, վոր նա լինի ճիշտ տեղական առարկայի վրա (Ա կետում), իսկ 40-00 լինի քարտեզի վրայի մագնիսային կամ աշխարհագրական միջորհականի ուղղությունը.


ե) գծել 30-00 ուղղությունը ԱԲ գիծը. ԱԲ-ի վրա, քարտեզի մասշտաբի համեմատ, նշանակել չափած տարածությունը (Ա կետից

դեպի Բ կետը) և այդ գծի վրա Ո կետը կլինի մեր կանգնելու կետը քարտեզի վրա:


3. Յերբ կանգնելու կետից յերևում են 3 կողմորոշ առարկաներ, վորոնք կան նաև քարտեզի վրա (և այդ կետերը կազմում են յուանկյունի):

1 Դեպք. կանգնելու կետը գտնվում է յեռանկյունու շերտում (գծանկ. 167).

ա) տեղանքում այդ կետից մեկն ու մեկը ընդունում ենք վորպես յեռանկյան դագաթ (ավելի հարմար է մեջտեղի կետը), անկյունաչափի 30-00 ուղղում ենք այդ կետին և չափում ենք ԲԳ և ԱԳ անկյունները: Յենթադրենք, Թե այդ անկյունները հավասար են  $1=17-00$ ,  $11=22-07$ .



Գծանկ. 167.



Գծանկ. 168.

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**—Այնտեղ, վորտեղ ուղղված անկյունաչափի 30-00 կողմում է միջին գիծ (Գ), իսկ նրանից աջ աջակողմյան (Բ), իսկ ձախը՝ ձախակողմյան (Ա), միջին և աջակողմյան կետերի միջև յեզած անկյունը գրում են այսպես -1, իսկ միջին և ձախակողմյանը -11:

բ) Գքարտեզի (տղանկետի) վրա միացնում ենք աջակողմյան և ձախակողմյան կետերը ԱԲ ուղիղով (գծանկ. 167):

գ) ԱԲ գծի վրա աջակողմյան Բ կետում կառուցում ենք 11 անկյունը (22-00), իսկ ձախակողմյան Ա կետում՝ 1 անկյունը (17-00):


դ) Շարունակում ենք կառուցվող անկյունների կողմերը մինչև նրանց հատումը Դ կետում:

ե) Միացնում ենք Դ և Գ կետերը. այդ գծի վրա կամայական է կետում կառուցում ենք 1 անկյունն այն կողմի վրա, վորի վրա առաջ եր չափված, նույնպես և 11 անկյունը, վոր առաջ եր չափված:


դ) Բ կետից քաշում ենք ՆՏ գիծը ԵՆ գծին զուգահեռ և Ա կետից քաշում ենք ՊՇ գիծը ԵԾ գծին զուգահեռ. այդ գծերը շարունակում ենք մինչև ԴԴ գծին հասելը. այդ հատման Կ կետը կլինի կանգնելու կետը քարտեզի վրա:

Չ Դեպք. Կանգնած կետը գտնվում է յեռանկյունու կողմերից մեկի շարունակության վրա:

ա) Տեղանքի վրա Կ կետում չափում ենք 1 և 11 անկյունները:




Գծանկ. 169.




Գծանկ. 170.

յեթե 1 և 11 անկյունները գումարը կլինի 40—00, ապա դա կլինի այն դեպքը, յերբ կանգնելու կետը գտնվում է յեռանկյունու կողմերից մեկի շարունակության վրա (գծանկ. 169):

բ) Քարտեզի (պլանշետի) վրա պետք է միացնել Ա և Բ կետերը (վորոնց միջև գտնվում է կանգնելու կետը) և ԱԲ ուղղի վրա Բ կետում կառուցել 11 անկյունը կամ Ա կետում 1 անկյունը (գծանկ. 170):




Գծանկ. 171.



Գծանկ. 172.


գ) Դ կետից ասանել մի ուղիղ գիծ՝ կազմած կողմին զուգահեռական մինչև ԱԲ գծին հասելը (Կ) կետում:

Յ Դեպք. Կանգնած կետը գտնվում է յեռանկյունուց դուրս:  
 ա) Կանգնած կետում չափում ենք 1 և 11 անկյունները (գծանկ. 171).  
 բ) Քարտեզի վրա միացնում ենք ԱԲԴ կետերը, վորից հետո Բ կետում կառուցում ենք 11 անկյունը, իսկ Ա կետում 1 անկյունը (գծանկ. 172):




Գծանկ. 173.

դ) ուղիղ գծով Դ կետը միացնում ենք Ե հետ:  
 ե) Դ գծի շարունակության վրա կամայական կետում, որինակ Զ կետում կառուցում ենք 1 անկյունը Բ կետի մոտ:  
 Ն) Բ կետից քաշում ենք Կ կետում կառուցված անկյան կողմին մի զուգահեռ գիծ (ԲՏ || ՆՊ) և այդ գիծը շարունակում ենք մինչև ԴԵ գծի շարունակության հասումը. այդ հատման (Կ) կետը կլինի մեր կանգնելու կետը քարտեզի վրա (գծանկ. 173):



Գծանկ. 174.



Գծանկ. 175.

4 Դեպք. Համբերտի լեղանակով.

ա) տեղանքի վրա (Կ) կանգնած կետում (գծանկ. 174) չափել 1 և 11 անկյունները:

բ) Քարտեզի վրա միացնել Ա և Բ կետերը և ԱԲ աղեղի վրա Բ կետում կառուցել 11 անկյունը, իսկ Ա կետում 1 անկյունը (գծանկ. 173):

գ) շարունակել կառուցվող անկյունների կողմերը մինչև նրանց հատումը Դ կետում:

դ) ԱԲ և Դ կետերի միջև արտագծել մի շրջանագիծ, շրջանագծի կենտրոն ընդունելով յեռանկյունու ԱԴ և ԲԴ կողմերի մեջտեղից տարած դժերի հատման կետը:


ե) միացնել Գ և Դ կետերը միմյանց հետ. ԳԴ ուղիղ գծի և շրջանագծի հատումը կտա (Կ) կանգնած կետը քարտեզի վրա:

5 Դեպք. Բոլոտովի լեղանակով.


ա) Կ կանգնած կետում պետք է չափել 1 և 11 անկյունները:

բ) Քարտեզի վրա պետք է դնել մի կտոր թափանցիկ թուղթ այնպիսի մեծությամբ, վոր բոլոր 3 կողմորոշ առարկաները և կանգնած կետը տեղավորվեն այդ թղթի վրա.

գ) Թափանցիկ թղթի վրա կամայականորեն նշանակած կանգնելու (Կ) կետում պետք է կառուցել 1 և 11 անկյունները (անկյունները կառուցել լար-անկյունաչափի ոգնությամբ, իսկ շտապ դեպքում՝ ցելուլոիդի բոլորակի ոգնությամբ):



Գծանկ. 176.



Գծանկ. 177.

դ) ԱԿ, ԲԿ, ԳԿ գծերի վրա պետք է գրել այդ տեղական առարկաների անունները:

ե) Թափանցիկ թուղթը պետք է դնել քարտեզի վրա և պտտել այնքան, վոր թափանցիկ թղթի վրա գտնվող տեղական առարկաները համատեղվեն քարտեզի վրայի նույն կետերի հետ:


զ) կետերը քարտեզի վրա համատեղվելուց հետո, (Կ) կետում

պետք է տնկել մի գնդասեղ և դա կլինի կանգնած կետը քարտեզի վրա:


6 Դեպք. Ցելուլոիդի բոլորակի ոգնությամբ.

ա) կանգնած կետում պետք է դնել անկյունաչափը.

բ) Ընտրել 3 լավ յերևացող կողմորոշ առարկաներ, վորոնք պետք է մեկը մյուսից հեռու լինեն և նկարած լինեն նաև քարտեզի վրա (գծանկ. 178).



Գծանկ. 178.



Գծանկ. 179.

գ) Անկյունաչափի 30—00 ուղղել այդ կետից մեջտեղի կետին և նշադրել մյուս յերկու կետին.

դ) Դնել ցելուլոիդի բոլորակը քարտեզի վրա (գծանկ. 179) այնպես, վոր նրա 30—00 արամագիծն ուղղված լինի քարտեզի վրայի մեջտեղի առարկային (30—00 դեպի առարկան, 0-ն դեպի իրեն, գծանկ. 179) և դարձնել այնքան, վոր մյուս առարկաներն ընկնեն ստացած նշադրումների արամագծի վրա. դրան հասնելուց հետո, ցելուլոիդի բոլորակի կենտրոնը կլինի կանգնած կետը քարտեզի վրա:

7 Դեպք. Առանց անկյուններ չափելու (Թափանցիկ թղթի ոգնությամբ).

ա) Թափանցիկ թուղթն ամրացնել պլանշետի վրա և այդ թղթի վրա կամայականորեն վերցրած կետն ընդունել վորպես կանգնելու կետ:

բ) Քանոնը դնել թղթի վրա, այդ կանգնած կետում տարադիտել այն 3 կողմորոշ առարկաների ուղղությամբ, վորոնք գտնվում են նաև քարտեզի վրա. այդ ուղղությունները բարակ գծել թափանցիկ թղթի վրա:

գ) Այդպես գծած թափանցիկ թուղթը դնել քարտեզի վրա, թուղթը դարձնել այնքան, վոր թղթի վրա գտնվող բոլոր ուղղությունները համատեղվեն քարտեզի վրայի առարկաների հետ. կանգնելու կետը քարտեզի վրա տնկել մի գնդասեղ, և դա կլինի կանգնելու կետը քարտեզի վրա, յերբ կանգնելու


4. կանգնելու կետի վորոշումը քարտեզի վրա, յերբ կանգնելու

կետից տեղանքում յերևում են միայն լերկու կետ, վորոնք գտնվում են նաև քարտեզի վրա:

II. Ուղիղ հասումով

Ա. Անկյունները չափելով:

1. Տեղանքի վրա տարադիրտում կատարել Ա և Բ կետերից (վորոնք նկարված են քարտեզի վրա. և Ա կետից կարելի չէ տեսնել Բ կետը և ընդհակառակը):




Գծանկ. 180.


Ա և Բ կետերից պետք է տեսնել նաև վորոնների կանգնելու կետը (Կ) տեղանքի վրա, չափել I և II անկյունները:

$I = 8-00(3000-22-00)$ ;  $II = 7-00(37-00-30-00)$ .

2. Քարտեզի վրա միացնել Ա և Բ կետերը (գծանկ. 180). Ա և Բ ուղիղ գծի վրա կառուցել I և II անկյունները (լար-անկյունաչափի ոգնությամբ) և կառուցված անկյունների կողմերը շարունակել մինչև նրանց հատումը Կ կետում:



Գծանկ. 181.



Գծանկ. 182.

Այդ Կ կետը կլինի վորոնների կետը:

Բ. Առանց անկյունները չափելու.

1. Քարտեզի վրա միացնել Ա և Բ կետերը (գծանկ. 17), պլանշետը (քարտեզը վրան ամրացած) տեղափոխել կամ Ա, կամ Բ կետը Պլան-

շետը կողմորոշելով դեպի Բ կետը (Ա կետում կանգնած ժամանակ), տարադիրտել տեղանքում վորոնների կանգնելու կետի ուղղությամբ և զծել այդ ուղղությունը:

2. Պլանշետը տեղափոխել Բ կետը. պլանշետը կողմորոշելով դեպի Ա կետը, նորից տարադիրտել վորոնների կանգնելու կետի ուղղությամբ և զծել այդ ուղղությունը քարտեզի վրա. այդ գծած ուղղությունների հատման կետը կլինի վորոնների կանգնելու կետը քարտեզի վրա:

III. Կիսափակագծաձև հասման միջոցով վորոնել կանգնելու կետք փարեզի վրա (լերբ լերկու կետերից մեկն անմատչելի չէ):

Ա. Անկյունները չափելով.


Տեղանքի վրա կան Ա և Բ կողմորոշ առարկաները (գծանկ. 183), վորոնք նկարված են նաև քարտեզի վրա, բայց Բ կետն անմատչելի չէ, այսինքն Բ կետն անցնել անհնարին է:

Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ պայմանը.


ա) Ա կետից պետք է յերևա Կ կետը (վորոնների կանգնելու կետը). և Կ կետից լերևա անմատչելի Բ կետը.

բ) Ա կետից չափել I անկյունը, վոր  $= 9-00(30-00-21-00)$ , Կ կետից չափել II անկյունը, վոր  $= 18-00(30-00-12-00)$ .

գ) Քարտեզի վրա միացնում ենք Ա և Բ կետերը (գծանկ. 19). Ա և Բ գծի վրա Ա կետում կառուցում



Գծանկ. 183.




Գծանկ. 184.

ենք I անկյունը. այդ կառուցված անկյան, նոր ստացած կողմի շարունակության վրա, կամայական է կետում, դեպի Բ կետի կողմը կառուցել II անկյունը:

դ) Բ կետից անցկացնել ԲԿ ուղիղ գիծը ԵԳ-ին զուգահեռ (ԵԳ || ԲԿ). ԲԿ գծի հատումը ԱԵ գծի հետ տալիս է կանգնելու կետի տեղը քարտեզի վրա:

Բ. առանց անկյունները չափելու

ա) Քարտեզի վրա միացնել Ա և Բ կետերը (գծանկ. 20). պլանշետը (քարտեզը վրան ամրացած) դնել Ա կետում, պլանշետը կողմորոշել դեպի Բ կետը և տարադրիտել տեղանքի վրայի վորոնելի կանգնելու



Գծանկ. 185.

կետի ուղղությամբ և գծել այդ ուղղությունը:

բ) Պլանշետը տեղափոխել վորոնելի կետը, պլանշետը կողմորոշել դեպի Ա կետը, վորից հետո քանոնը դնել Բ կետում քարտեզի վրա և տարադրիտել տեղանքում դեպի այդ կետը և քաշել այդ Բ կետի ուղղությունը քարտեզի վրա. այդ լեռկու ուղղություններից ստացած հատման կետը կլինի վորոնելի կանգնելու կետը:

**ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ ԳՏՆԵԼ ՆՇԱԴՐՄԱՆ ԿԵՏԻ ՈՒՂԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

1 Դեպք. Նշադրման կետը լեռում է մարտկոցից և այդ կետը նկարած է նաև քարտեզի վրա. նշադրման կետի ուղղությունը գտնելու համար բավական է քարտեզի վրա միացնել հիմնական գնդացրի տեղը նշադրման կետի հետ և այդ գտած ուղղությունը կլինի նշադրման կետի ուղղությունը:

II Դեպք. Կարող է պատահել, վոր քարտեզի վրա չլինի տեղանքում վերցված նշադրման կետը: Այն ժամանակ վարվում են այսպես.

1 Դեպք. Տեղանքի վրա, նույնպես և քարտեզի վրա կա մի կողմորոշ առարկա, վոր լեռում է հիմնական գնդացրից:

1. Հիմնական գնդացրի կանգնած կետից անկյունաչափի 30-00 ուղղում ենք կողմորոշ առարկային, վոր կա տեղանքում և նկար-


ված է քարտեզի վրա [մեր որինակում վերստացուցն է (գծանկ. 186)]:

2) Նշադրում ենք նշադրման կետին ու վորոշում ենք 2 անկյունը:

3) Քարտեզի վրա միացնում ենք հիմնական գնդացրի տեղը կողմորոշ առարկայի հետ և հիմնական գնդացրի կանգնած կետում կառուցում ենք 2 անկյունը. այդ կառուցված անկյան յերկրորդ կողմը կլինի նշադրման կետի ուղղությունը քարտեզի վրա:

II Դեպք. նշադրման կետը նշանակված չէ քարտեզի վրա և հիմնական գնդացրի կանգնելու կետից չի յերևում վոր մի կողմորոշ առարկա, վոր նկարված լինի քարտեզի վրա:

1. Մարտկոցի շրջակայքում պետք է ընտրել մի այնպիսի ագնող



Գծանկ. 186

Ե կետ (գծանկ. 187), վորից լեռում է մարտկոցից և այդ կետը նկարած է նաև քարտեզի վրա:

2. Այդ կողմորոշ առարկաների ողնությամբ պետք է գտնել Ե կետի տեղը քարտեզի վրա և տեղանքում Ե կետի տեղը նշանակել ձողով:

3. Տեղանքում հիմնական գնդացրի կանգնելու կետից անկյունաչափի 30-00 ուղղել Ե կետին (ձողին) և նշադրել նշադրման կետին ու վորոշել 2 անկյունը:

4. Քարտեզի վրա ուղիղ գծով միացնել Ա և Ե կետերը. Ա և Ե ուղիղի վրա Ա կետում կառուցել 2 անկյունը. կառուցված անկյան յերկրորդ կողմը կլինի նշադրման կետի ուղղությունը:

**ՆՇԱՆԻ ՏԵՂԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ**


Տեղական առարկայի ողնությամբ

1. Նշանը գտնվում է այնպիսի առարկայի շրջակայքում, վորը նկարված է քարտեզի վրա:

2. Նկատելով նշանի զրությունն այդ կողմորոշ առարկայի նկատմամբ, վորոշել նշանի տեղը քարտեզի վրա:

Մի կեսից

1. Նշանի տեղի վորոշումը մի կետից հնարավոր է միայն այն դեպքում, յերբ նշանը գտնվում է մի վորևե ցայտուն կերպով աչքի ընկնող տեղական առարկայի մոտ



Գծանկ. 188.

և, բացի այդ, կան կողմորոշ առարկաներ, վորոնք նկարված են նաև քարտեզի վրա: Այդ ժամանակ պետք է չափել և անկյունը կողմորոշի և նշանի միջև (նշանը բարձունքի վրա չէ) (գծանկ. 188).


2. Քարտեզի վրա միացնել դիտակետը կողմորոշի հետ (այսինքն Ա և Բ) և ԱԲ ուղիղ գծի վրա Ա կետում կառուցել և անկյունը.

այդ անկյան ԱԳ կողմի շարունակության վրա, բարձունքի վրա կլինի նշանի տեղը:

Յեղու կեսից


Նշանի հատումը լերկար բազայի ողնությամբ:

Այս յեղանակով նշանի տեղը ճիշտ վորոշելու համար անհրաժեշտ է, վոր յերկար բազան լինի նշանի հեռավորության  $\frac{1}{2}$ — $\frac{1}{5}$ -ից վոչ պակաս: Բացի այդ, քարտեզի վրա պետք է լինի ճիշտ նշանակված յերկու դիտակետերի տեղերը: Նշանի տեղը գտնելու համար վարվում են այնպես:



Գծանկ. 189.

1. Ընտրել կամ մի ընդհանուր որիենտիր (գծ. 188), կամ առանձին-առանձին որիենտիրներ (գծանկ. 190), յերբ դիտակետերը տեսնում



Գծանկ. 190.

են միմյանց, ապա այդ յերկու դիտակետերը հանդիսանում են փոխադարձ որիենտիրներ:

2. Յերկու դիտակետերից անկյունաչափի 30-00 ուղղում են որիենտիրներին և չափում որիենտիրների և նշանի միջև յեղած անկյունը:

3. Քարտեզի վրա լար-անկյունաչափի ողնությամբ գծում են այդ անկյուններն որիենտիրների ուղղություններից, և մյուս յերկու կողմերի հատման կետը ցույց կտա նշանի տեղը քարտեզի վրա:

ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ


1 Հեռավորության վորոշումը քարտեզի վրա (նշանոցի վորոշումը)

Կարելի է ողնությամբ չափում ենք մարտկոցի և նշանի հեռավորությունը և այդ կարելի է բացվածքով խոտորնակի մասշտաբի (կամ քարտեզի մասշտաբի) ողնությամբ վորոշում ենք մարտկոցի և նշանի հեռավորությունը:

II. Հիմնական գնդացրի ուղղության վորոշումը


(անկյունաչափի կամ բուստրի հաստման վորոշումը)

Քարտեզի վրա հիմնական գնդացրի համար անկյունաչափի կամ բուստրի մեծությունը բավականին ճիշտ վորոշելը կարելի է միայն այն դեպքում, յերբ ճիշտ կչափենք հետևյալ անկյունները:




Գծանկ. 191.

1. Անկյունն՝ նշան—հիմնական գնդացրի—նշանադրման կետ.  
2. Բուստր՝ նշան—հիմնական գնդացրի—նշադրման կետ.



Գծանկ. 192.

Այստեղ կարող ե լինել յերկու դեպք. 1) նպատակը (նշանը) կարող ե լինել նշադրման կետից դեպի աջ կամ ձախ կողմը. 2) նշանը կարող ե լինել մագնիսային (սլաքից) միջորեականից դեպի աջ (գծանկ. 191) կամ ձախ (գծանկ. 192) կողմը:



Գծանկ. 193.

Յերբ նշադրման կետը գտնվում ե հիմնական գնդացրից դեպի յետ, ապա մենք չափում ենք նշադրման կետի—հիմնական գնդացրի—նշանի լրացուցիչ անկյունը (գծանկ. 193):


### III. ԱՆԿՅՈՒՆԱԶԱՓԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անկյունաչափը վորոշելու համար հիմնական գնդացրի կանգնած կետից չափում ենք նշադրման կետի—հիմնական գնդացրի—նշանի միջև յեղած անկյունը: Յեթե նշանը նշադրման կետից աջ ե գտնվում, ստացած անկյունը պետք ե գումարել 30-00 ի հետ և ստացած անկյունաչափը կլինի վորոշնելի անկյունաչափը. իսկ յեթե նշանը նշադրման կետից ձախ ե գտնվում, ապա չափած անկյունը պետք ե հանել 30-00-ից և ստացած անկյունաչափը կլինի վորոշնելի անկյունաչափը (գծանկ. 192):


IV. Հիմնական գնդացրի բուսոյի մեծությամբ վորոշնելի վրա

Քարտեզի վրա պետք ե չափել հյուսիսի—հիմնական գնդացրի—նշանի միջև յեղած անկյունը: Յեթե նշանը մագնիսային միջորեականից

ձախ ե գտնվում, ապա չափած անկյունը (5-50 կամ 22-30) պետք ե հանել 60-00 և, հետևապես, կտտանանք հիմնական բուսոյը հիմնական գնդացրի համար 54-50 կամ 37-70 (գծանկ. 194):



Գծանկ. 194.



Գծանկ. 195.

Յերբ նշանը գտնվում ե մագնիսային միջորեականից դեպի աջ, ապա չափած անկյունը (6-80 կամ 23-00) կլինի վորոշնելի բուսոյի մեծությունը (գծանկ. 195):


Անկյունաչափի կամ բուսոյի մեծություներ կարելի յե վորոշել ցելուլոսիդի բոյսոյի ոգնությամբ

Անկյունաչափը վորոշելու համար պետք ե. Յելուլոսիդի բուսոյի կենտրոնը պետք ե գնել հիմնական գրնդացրի կանգնած կետում, իսկ 30-00 ուղղել նշանին և նշադրման կետի գիմաց (քարտեզի վրա) կարգալ անկյունաչափի մեծությունը. ստացած անկյունը փոխել 30-00-ով. ստացածը կլինի վորոշնելի անկյունաչափը.

Հիմնական գնդացրի բուսոյը վորոշելու համար պետք ե. Յելուլոսիդի բուսոյի կենտրոնը գնել հիմնական գնդացրի կանգնած կետում, 30-00 ուղղել նշանին և բուսոյի վրա մագնիսային միջորեականի գծի գիմաց կարգալ բուսոյի մեծությունը:

ՃԱՆՈՒՅՈՒՅՈՒՆ. Մագնիսային խոտորման մեծությունը վորոշելու և համապատասխան ուղղութեամբ մտցնելու համար, մագնիսային խոտորման չափը քարտեզի վրա վորոշվում ե հետևյալ ձևերով:

1. ՄԱԳՆԻՍՏՅԻՆ ԽՈՏՈՐՄԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԱՐԵՎԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ



Գծանկ. 196.

$x =$  մագնիս. խոտորմանը:  
 $w =$  բուսողի մեծությանը՝ յերեկոյան:  
 $r =$  բուսողի մեծությանը՝ առավոտյան:

$$r - x = w + x$$

$$2xr = w -$$

$$x = \frac{r - w}{2}$$

ա) Բուսողի մոնոկուլյարի 30-00 ուղղում ենք ծագած արևին (առավոտյան) և կարգում ենք «0»-ի և մագնիսային սլաքի առնում:

բ) Միևնույն գործողությունը կատարում ենք արևը մայր մտնելիս (յերեկոյան) և զրի առնում անկյունը:

գ) այս պետք է հանել մեծ անկյունը փոքրից և ստացածը բաժանել խոտորման մեծության վրա. այդ խոտորումը կոչվում է արևավոտյանը, յերբ յերեկոյան չափած անկյունն ավելի փոքր է, քան առավոտյանը, և կոչվում է արևելյան, յերբ առավոտյան չափած անկյունն ավելի փոքր է քան յերեկոյանը:

2. ՄԱԳՆԻՍՏՅԻՆ ԽՈՏՈՐՄԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՐՏԵՁԻ, ՅԵՂԻՆՆԻՆԻ ԲՈՒՍՈՂԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ

ա) Տեղանքի վրա պետք է ընտրել յերկու կետ Ա և Բ, վորոնք նկարված են նաև քարտեզի վրա (գծանկ. 197).

բ) Ա կետում դնել բուսողը և 30-00 ուղղել Բ կետին, վորոշել մագնիսային աղիմուտի կամ բուսողի մեծությունը (9-20).


ԳԱԲ = աշխ. աղիմուտ = 13-20 = Ա.

ԴԱԲ = մագն. Աղիմուտ = 9-20 = Մ.

ԳԱԴ = մագն. խոտորում = 4-09 արևելյան = Խ.

գ) Քարտեզի վրա Ա կետից պետք է գծել աշխարհագրական միջլորեականը, ցելուլոզի բոլորակի ոգնությամբ վորոշել աշխարհագրական աղիմուտի մեծությունը Բ կետի համար (13-20).

դ) Աշխարհագրական աղիմուտի և մագնիսային աղիմուտի տարբերությունը կլինի մագնիսային խոտորման մեծությունը:



Գծանկ. 197.

3. ՈՒՂՂՈՒՄ ՄԱԳՆԻՍՏՅԻՆ ԽՈՏՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՏԵՁՈՎ, ԲՈՒՍՈՂԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ ԿՐԱԿԵԼԻՍ

ա) Քարտեզի վրա հիմնական գնդացրի կանգնած կետից գծել աշխարհագրական միջլորեականը.

բ) Ցելուլոզի բոլորակի կենտրոնը դնել հիմնական գնդացրի կանգնած կետի վրա, 36-00 ուղղել նպատակին և կարգալ աշխարհագրական աղիմուտի մեծությունը բոլորակի վրա աշխարհագրական միջլորեականի ծայրում:

գ) Վորոշելով աշխարհագրական աղիմուտի մեծությունը, ուղղում մտցնել մագնիսային խոտորման համար, հիշելով, վոր աշխարհագրական աղիմուտը հավասար է մագնիսային աղիմուտին, զուգարած մագնիսային խոտորումը, յեթե խոտորումը արևելյան է, և հանած այդ խոտորումը, յերբ դա արևմտյան է:

Աշխ աղիմ. = 9-20 + 4-00 = 13-20

Ա = Մ + Խ, յերբ Խ արևելյան է:

Ա = Մ - Խ, յերբ Խ արևմտյան է:

Որինակ. Մագնիսային խոտորումն արևելյան է և հավասար է +0-50.

Բուսողն ըստ քարտեզի (աշխ. աղիմուտի) 53-00. Մարտկոցին հրաման տալ՝ «բուսող 53-50» (59-00 + 0-50): Որինակ. մագնիսային խոտորումն արևմտյան է և հավասար է -1-00.

Աշխարհագրական աղիմուտը քարտեզի վրա = 55-00. մարտկոցին հրաման տալ՝ «բուսող 54-00» (55-00 - 1-00): Որինակ. Մագնիսային խոտորումն արևելյան է և հավասար է +1-20.

Բուսող-նշան ուղղությունը տեղանքում = 50-80 (մագն. աղիմ.), աշխատանքը քարտեզի վրա շարունակելու համար հրաման տալ՝ «բուսող 52-00»: (50-80 + 1-20) (աշխարհագրական աղիմուտը):

4. ՏԵՂԻ ԱՆԿՅԱՆ ՉԱՓՈՒՄԸ ՔԱՐՏԵՁԻ ՎՐԱ

1. Քարտեզի վրա վորոշել, թե նշանը վնդրան է ավելի բարձր կամ ցածր մարտկոցից. դրա համար անհրաժեշտ է իմանալ քարտեզի հատվածի բարձրությունը և նշանը մարտկոցից քանի հորիզոնականով բարձր կամ ցածր լինելը.

Որինակ Քարտեզի հատվածի բարձրությունն է 4 սաժեն. նշանը բարձր է մարտկոցից 6 հորիզոնականով, հետևապես, նշանը բարձր է մարտկոցից  $4 \times 6 \times 3 = 72$  քայլի:

2. Քարտեզի վրա չափել մինչև նշանը յեղած հեռավորությունը. յենթադրենք = 3000 քայլի:

3. Հետևապես տեղի, անկյունը =  $\frac{72 \cdot 1000}{3000} = 0-24$ .

5. ՎՈՐՈՇԵԼ ԵՎ ԱԶՍԳՈՒՅՆ ՆՇԱՆՈՑԸ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Քարտեզի վրա չափել ծածկարանի բարձրությունը մարտկոցից, ինչպես ասված էր IV կետում:

2. Չափել մարտկոցից մինչև ծածկարանը յեղած հեռավորությունը:

3. Վորոշել ծածկարանի անկյունը:

$$4. \text{Ծածկարանի անկյունը} = \frac{\text{ծածկ. բարձր.} \times 1000}{\text{մարտ. մինչև ծածկ. հեռ.}}$$

Որինակ. Ծածկարանի բարձրությունը 30 քայլ է.

ծածկարանի հեռավորությունը մարտկոցից 1300 քայլ է:

$$\text{Ծածկարանի անկյունը} = \frac{30 \times 1000}{1300} = 0-23$$

№ 1 աղյուսակում 0-23 համապատասխանում է նշանոց 17, հետևապես, նվազագույն նշանոցը = 17 + 2 = 19.

Գ Լ ՈՒ Խ XX

ԿՐԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կրակի ղեկավարությունը բաղկացած է յերկու բաժիններից:

I. Տակտիկահրաձգային բաժին.

II. Տեխնիկական բաժին:

Տակտիկա—հրաձգային բաժինը բաղկացած է հետևյալ տարրերից:

1. Կրակային (ծածկված) դիրքերի ընտրությունը, Կրակային դիրքերի ընտրությունը պետք է բավարարի հետևյալ պահանջներին:  
 ա) Ըստ հնարավորությունների, նվազագույն նշանոցն ավելի փոքր լինի.

բ) այնպիսի տեղ ընտրել գնդացիներին համար, վոր մեռյալ տարածություն մեծությունը փոքրանա.

գ) ազատ կերպով հնարավոր լինի կրակը անդադիոխել ցանկալի ուղղությամբ.

դ) հնարավորություն տա անընդհատ մատակարարելու հրապարակ.

ե) համապատասխան ծածկարան լինի ձիերի համար:

2. Դիտակետի ընտրությունը, վոր պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

ա) ունենալ լավ տեսածիր, ինչպես դիրքերի առջևում, այնպես էլ դիրքերի խորքում.

բ) հնարավոր լինի քողարկել ուղային և վերերկրյա հակառակողից.

գ) հնարավորություն տա կրակը ճշտելու դիտակետից.

դ) ունենա համապատասխան ծածկարան, վորն ապահովի մարտկոցի հետ անընդհատ կապի հնարավորությունը.

ե) այնպիսի տեղ լինի, վորտեղից կարող ենք ընտրել մի շարք որիենտիբներ.

3. Մարտադաշտի ընտրությունն ու հետախուզությունը.

Մարտադաշտի հետախուզությունը հրաձգային դիտակետից, վոր կատարվում է, հնարավորին չափ, նախապես, պետք է նկատի ունենա մարտադաշտի ուսումնասիրությունն ու հետազոտությունը հրաձգային կրակի հասողություն սահմաններում: Այդ հետախուզությունը նպակի ունի հրամատարի համար հեշտացնել յերևան յեկող նշաններն արագ գտնելը, նրանց գնահատելը և նրանց ավելի գործոն հարվածելու տվյալները հավաքելը:

Հետախուզությունը կատարում է անմիջականորեն ինքը՝ հրամատարը, յերբ կարելի չէ, հետախույզների ոգնությունը, իսկ յերբ հնարավոր չէ, բարձր դիտակետից, քարտեզի և յերկրիտակի ոգնությունը:

Մարտադաշտի անընդհատ դիտողությունը նկատի ունի նշանները ժամանակին յերևան հանելու և նրանց հետևելու: Մարտ վարելու արհեստական ջողարկման յեղանակները, մարտադաշտի դիտողությունն առանձնապես կարևոր է դժվար է:

Կրակի հետևանքի դիտողությունը կազմակերպելու դեպքում, պետք է նկատի ունենալ ներքոհիշյալ գծանկարի և աղյուսակի մեջ ցույց աված ցուցումները:

Դիտողության աղյուսակ

Դիտողներ	Չախ է	Լավ է	Աջ է	
			Այլ	Այլ
Չախահողմյան				
	Դիտողության հետևանքը			
Չախ է . . . . .	Դեպի ձախ	Անդրանցում +	Անդրանցում +	
Լավ է . . . . .	Չհասում —	Լավ է	Անդրանցում +	
Աջ է . . . . .	Չհասում —	Չհասում —	Դեպի աջ	

Կրակային դիտողություն կազմակերպելու դեպքում, անհրաժեշտ է նկատի ունենալ այս գծանկարում ցույց տված դրությունը, վոր բավականաչափ կհեշտացնի փորձական հրաձգության ատարումը, փամփուշտները քիչ վատնելու և ժամանակ շահելու համար:

Յուրաքանչյուր գնդացրային միավոր պետք է ունենա՝


ա) պատասխանատու կրակի շերտ (ուղղութիւն)։

բ) լրացուցիչ սեկտոր։

ա) շերտի կամ ուղղութիւն կարեւորութիւնն է։

բ) զենքի տիպարից։

գ) դիտողութեան սեկտորի մեծութիւնն է, վոր բաժանվում է որիննախընթացի ոգնութեամբ։



Գծանկ. 198.

Լրացուցիչ սեկտորը նշանակվում է գործն կրակի հեռավորութեան սահմաններում հարեանների հետ կրակային համադրման կցութիւն հաստատելու համար։

Հատուկ ուղղութիւնը նշանակվում է խափանիչ կրակի համար։

Յեղնելով մարտական խնդրից, ստացած պատասխանատու շերտից, լրացուցիչ սեկտորից և հատուկ ուղղութիւնից, մարտադաշտի դիտողութիւնն ու հետախուզութիւնը պետք է պատասխանի ներքոնշույալ հարցերին։

1. Վճռահղ և ի՞նչպիսի կրակային դիրքեր ունենք թե մենք և թե հակառակորդը և այդ դիրքերի առավելութիւնները։

2. Ի՞նչ հեռավորութեան վրա հնարավոր է գնդակոծել տեղանքը դիրքերի առջևում ու շրջակայքում (մեռյալ և հարվածելի տարածութեան վերջում)։

3. Ի՞նչպիսի մատուցներ կան, վորոնք քողարկում են հակառակորդի շարժումը։

4. Ի՞նչպիսի կետերից (թևերից) հնարավոր է հարվածել մատուցները։

5. Ի՞նչպիսի կրակային սիստեմ կարելի յե կազմակերպել մատուցները գնդակոծելու համար։

6. Ի՞նչպիսի հնարավորութիւն կա կրակային կապ ստեղծելու հարեանների հետ։

7. Ի՞նչպիսի դիտակետերից հնարավոր է կազմակերպել լայն կիրպով մարտադաշտի դիտողութիւնը։

8. Ի՞նչպիսի մատուցներ կան, վորոնք քողարկում են մեր շարժումը դեպի առաջ։

9. Ի՞նչպիսի խոչընդոտներ կան և ի՞նչպես դրանց հաղթահարել։

10. մոտավորապես ի՞նչ վայրում հնարավոր է սպասել հակառակորդի լեռնան գալը։

11. Ի՞նչպես կարելի յե կազմակերպել փամփշտի մատակարարումը սովալ վայրում ու պայմանում։

Այս բոլոր հարցերը պարզելուց հետո, պետք է կազմել հրաձգային քարտը, հետևյալ ձևով։


Հրաձգային քարտ

Հետախուզի կանգնելու կետը 376 բարձ.

21. 4. 31. քարտ. 2500

Տեղական առարկաների, ճեղքների անունները	Հ (հն)	Ի՞նչ յեղանակով է չափված հեռավորութիւնը	Ա (հն)	Անկյունն ինչով է չափված
Հին որնետիրատանձին ծառ				
Դեպի աջ				
1. Փայտի կամուրջ	2400x	բարեհղով	+1-00	հարթաչափով
2. 485 բարձ.	2000x	աչքաչափով	-0-20	բարեհղով
3. Ջրաղաց	1000x	բարեհղով	+0-80	բանոնով
Դեպի ձախ				
1. Թփուտներ	3200x	աչքաչափով	+0-30	հարթաչափով
2. Առանձին տուն	2600x	բարեհղով	+0-50	բարեհղով

Հրաձգային քարտ կազմելու ձևերը



Գծանկ. 199.

4. ՆՇԱՆՆԵՐԻ զՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Նշանների գնահատությունն ու ընտրությունը կախված է պարագայից և խնդրից:

2. Թե վր նշաններն են ավելի կարևոր, չուրաքանչյուր դեպքի համար վճռական ցուցումներ տալ անհնարին է, բայց առհասարակ առաջին հերթին գնդակոծման յենթակա յեն այն նշանները, վորոնք տվյալ ըոպելին ավելի յեն խանգարում զորամասին տված խնդրի լուծմանը:

3. Հրաձգային դիտակետից, նշանի գնահատության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նշանի իսկական հարվածելիության հնարավորությունը տվյալ պայմաններում. հետևապես, պետք է հաշվի առնել, մի կողմից՝ նշանի հարվածելիության աստիճանը, այսինքն՝ նրա հեռավորությունը չափելը, կենտրոնացած ու տեսանելի լինելը, շարժման արագությունը և այլն. իսկ մյուս կողմից՝ այն զենքի քանակն ու վորակը (հզորությունն ու ճշտությունը), վոր նշանակված է նպատակի գնդակոծման համար:

5. Զենքի յեվ կրակի տեսակի ընտրությունը կախված է՝

1. Զենքի մարտական տակտիկական ու ձգաբանական (բալիստիկական) հատկություններից.

2. նշանների հեռավորությունից ու տեղից.

3. կրակ բանալու մոմենտը հաշվում է այն ժամանակից, յերբ նշանը յերևում է և, բացի այդ, հնարավոր է հարվածել:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ ԲԱՂԿԱՅԱԾ Ե ԷՆՏԵՎՅԱԼ ՏԱՐԲԵՐԻՑ

1. Նշանները ցույց տալ գնդացրորդներին.

2. նշանոցի, ուղղանի հաստի և ընտրությունը. նշանոցի ամենաձեռնառու հաստումը համարվում է այն, վորի ժամանակ նշանը հարվածվում է միջին հետագծով, կամ, համեմատյն դեպս, ճանկվում է ձիգերի ցրման միջուկով.

Նշանոցի ընտրության համար իրրև հիմք ծառայում է նշանի, վորքան հնարավոր է, միշտ չափած հեռավորությունը:

3. Նշանառության կետի ընտրությունը.

ա) մարտում նշանառության կետը միշտ ընդունված է վերցնել նշանի տակը.

բ) բայց նշանառության կետն ընտրելու համար անհրաժեշտ է նաև հիշել հետևյալ կանոնը.

1. յերբ նշանոցն ավելի փոքր է, քան նշանի հեռավորությունը, պետք է նշան բռնել նշանի գագաթին.

2. յերբ նշանոցն ավելի մեծ, քան նշանի հեռավորությունը, պետք է նշան բռնել նշանի տակը:

Նշանառության կետի տեղը միշտ ընտրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հետագիծն այդ տարածության վրա:

4. Կրակի բախումը

Յերբ հրամատարը ցանկանում է մի քանի տեսակի զենքերի կրակը կենտրոնացնել նշանի վրա, այդ դեպքում նա կարող է վարվել յերկու յեղանակով. կամ չուրաքանչյուր տեսակի զենքին վերապահել ամբողջ նշանի գնդակոծումը, կրակը ցրելով, կամ բաժանելով նշանի ամբողջ յերկայնությանը, կամ նպատակը բաշխել նրանց միջև, առանձին տեղամասերի բաժանելով:

Առաջին յեղանակը բավականին հասարակ է. այդ յեղանակը հրամատարից չի պահանջում մանրամասն ցուցումներ տալու, վորոնք հրաձգային մարտում զժվար են հաջողվում:

Յերկրորդ յեղանակը ձեռնառու է հարմար է, յերբ նշանը տեսանելի ընդհատումներ ունի (այսինքն՝ յերբ նշանը բնականաբար տեղամասերի յե բաժանված):

5. Կրակի կարգապահությունը.

6. Փամփշախի մատակարարումը.

7. Փորձնական հրաձգություն կատարելու յեղանակները.

ա) նշանը ճանկի մեջ առնելը.

բ) մակերեսի գնդակոծումը.

8. Կրակի գործոնության գնահատումը.

(Յղուտակը տես հաջորդ էջ)

Նվազագույն հաստոցի յնվ ծածկարանից

Ծածկարանի անկյունը (հազ.)	Նշանոցի մեծությունը ծածկարանի անկյան համադրատ.	Ծածկարանի ծածկարանի անկյունը (հազ.)	Նվազագույն նշանոցի մեծությունը	Գ Ն Ղ յ Յ Ր ի Ն Ե ո Ս				
				100	200	300	400	500
13	12	17	14	0,92	18,4	2,7	3,7	4,6
				1	2	3	4	5
16	13	20	15	1,5	2,5	3,5	4,5	5,5
17	14	22	16	1,2	2,4	3,6	4,8	6
				2	3	4	5	6
20	15	25	17	1,4	2,8	4,2	5,7	7,1
				2	3,5	4,5	6	7
22	16	27	18	1,5	3,1	4,6	6,2	7,7
				2	4	5	7	8
25	17	30	19	1,8	3,6	5,3	7,1	9
				2,5	4,5	6	8	9,5
27	18	33	20	1,9	3,8	5,7	7,6	9,5
				3	5	7	9	11
30	19	37	21	2,1	4,2	6,4	8,5	10,6
				3	5,5	8	10	12,5
33	20	41	22	2,3	4,6	6,9	9,2	11,7
				3	6	9	11	14
37	21	46	23	2,6	5,2	7,8	10,4	13
				3,5	6,5	10	12,5	16
41	22	51	24	2,9	5,8	8,7	11,6	14,5
				4	7	11	14	18
46	23	57	25	3,2	6,5	9,7	13	16,2
				4	8	12	15,5	19,5
51	24	63	26	3,6	7,2	10,8	14,4	18,1
				4	9	13	17	21
57	25	69	27	4	8	12,1	16,1	20,2
				4,5	10	14,5	19	24
63	26	75	28	4,5	9	13,5	18	22,5
				5	11	16	21	27
69	27	82	29	4,9	9,8	14,7	19,6	24,5
				5,5	11,5	17	22,5	29
75	28	90	30	5,3	10,6	15,9	21,2	26,6
				6	12	18	24	31
82	29	100	31	5,8	11,6	17,4	23,2	29,1
				7	13	20	26,5	33,5

Ծածկարանից գնդացրի հեռավորությունը ցույց տվող սյունակի մեջ գտնվող թվերը՝ վերևի թվերը ցույց են տալիս ծածկարանի բարձրությունը մետրերով, իսկ ներքևի թվերը ցույց են տալիս հեռագծի բարձրությունը մետրերով:

Այս կամ այն թվերը համեմատելով, յերևում է, թե յերբ և միջին

ամենամեծ հեռավորության չափումը

վ ո Ր ո լ Թ յ ո լ ն ը ծ ա ծ կ ա Ր ա ն ի Յ Ք ա Ղ Ե Ր ո Վ

600	700	800	900	1000	1100	1200	1300	1400	1500	1600	1700	1800	1900
5,5	9,4	7,3	8,3										
5	6	6	6										
8,2	7,3	8,4	9,5										
6	7	7,5	7,5										
7,2	8,4	9,6	10,8	12	13,2								
7	8	9	9	9	9								
8,5	10	11,4	12,8	14,2	15,6								
8,5	9,5	10,5	11	11	11,5								
9,2	10,8	12,4	14	15,6	17,1								
10	11	12	13	13	14								
10,7	12,5	14,2	16	17,8	19,5								
11,5	13	14	15	15,5	16,5								
11,4	13,3	15,2	17,1	19	21	22,8	24,7						
13	15	16	17	18	19	19	20						
12,7	15	17	19	21,3	23,4	25,6	27,7						
14,5	16,5	18,5	19,5	21	22	22,5	23						
14	16,3	19	21,3	23,6	26	28	30	32	34				
16	18	21	22	24	25	26	26	26	26				
15,6	18,2	21	23	26	28,6	31	34	36	39				
18	20,5	23,5	25	27,5	29	30	30,5	31	31				
17,4	20,3	23,2	26	29	32	34,8	38	40	43,5	46			
20	23	26	28	31	33	34	35	36	36	33			
19,6	22,7	28	29,2	32,6	35,8	39,1	42	45	48	50			
22,5	25,5	29	32	35	37	38,5	40	41	41,5	41,5			
21,7	25,3	28,9	32,6	36,2	39,8	43,4	47	50	54	57	61		
25	28	32	36	39	41	43	45	46	47	47	47		
24,2	28,2	32,3	36,3	40,4	44,4	48,4	52,5	56	60	65	69		
28	31,5	36	40	43	46	48	50	52	53	54	55		
27	31,5	36	40,5	45	49,5	51	51	58	62	66	70	76	
31	35	39	43	47	51	53	56	58	60	61	62	62	
29,4	34,3	39,2	44,1	49	53,9	59,8	63,7	68	73	78	83	88	
34	38	43	48	52	56	59	62	65	68	69	70	71	
31,9	37,2	42,5	47,8	53,2	58,5	63,8	69,1	74	80	85	90	95	101
36	42	47	52	57	62	65	69	72	75	78	78	79	79
35	40,7	46,5	52,3	58,2	64	69,9	75,6	81,4	87	93	98	104	110
40	45	52	58	63	68	73	77	80	84	87	89	90	99

հեռագիծն անցնում ծածկարանից և յերբ և միջին հեռագիծը դիպում ծածկարանին:

Հաստ գծից դեպի ձախ յեղած թվերը ցույց են տալիս գնդացրի ամենամեծ հեռավորությունը ծածկարանից, իսկ աջ կողմի թվերը ցույց են տալիս, վր գնդացրը դեպ չի կարելի:

**Ա. դյուսակ**  
**Անկյուն. գնդացի-նեանի վրտումը**

Հեռ.	0-10	0-20	0-40	0-60	0-80	1-00	1-20	1-40	1-60	1-80	2-00	Նեանի անկյուն
100	1	2	4	6	8	10	12	14	16	18	20	0-01
200	2	4	8	12	16	20	24	28	32	36	40	0-01
300	3	6	12	18	24	30	36	42	48	54	60	0-02
400	4	8	16	24	32	40	48	56	64	72	80	0-02
500	5	10	20	30	40	50	60	70	80	90	100	0-03
600	6	12	24	36	48	60	72	84	96	108	120	0-04
700	7	14	28	42	56	70	84	98	112	126	140	0-05
800	8	16	32	48	64	80	96	112	128	144	160	0-06
900	9	18	36	54	72	90	108	126	144	162	180	0-07
1000	10	20	40	60	80	100	120	140	160	180	200	0-08
1100	11	22	44	66	88	110	132	154	176	198	220	0-09
1200	12	24	48	72	96	120	144	168	192	216	240	0-11
1300	13	26	52	78	104	130	156	182	208	234	260	0-13
1400	14	28	56	84	112	140	168	196	224	252	280	0-15
1500	15	30	60	90	120	150	180	210	240	270	300	0-17
1600	16	32	64	96	128	160	192	224	256	288	320	0-20
1700	17	34	68	102	136	170	204	238	272	306	340	0-23
1800	18	36	72	108	144	180	216	252	288	324	360	0-26
2000	20	40	80	120	160	200	240	280	320	360	400	0-33
2200	22	44	88	132	176	220	264	308	352	396	440	0-41
2400	24	48	96	144	192	240	288	336	384	432	480	0-51
2600	26	52	104	156	208	260	312	364	416	468	520	0-63
2800	28	56	112	168	224	280	336	392	448	504	560	0-74
3000	30	60	120	180	240	300	360	420	480	540	600	0-88
3200	32	64	128	192	256	320	384	448	512	576	640	1-04
3400	34	68	136	204	272	340	408	476	544	612	680	1-25
3600	36	72	144	216	288	360	432	504	576	648	720	1-45
3800	38	76	152	228	304	380	456	532	608	684	760	1-79
4000	40	80	160	240	320	400	480	560	640	720	800	2-25
4200	42	84	168	252	336	420	504	588	672	756	840	2-38
4400	44	88	176	264	352	440	528	616	704	792	880	3-75

$2\pi R = 6000$  անկյունաչափի բաժանման  $= 360^\circ$ .

$1^\circ = 16\frac{2}{3}$  անկյունաչափի բաժանման

Անկյունաչափի 1 բաժանման  $= 0,66^\circ = 3,6'$ .

**Ա. դյուսակի ոգտագործումը.**

Ուրիմակ. Բազան  $= 500$  քայլի

$U(\xi\eta) = -0-80$

$\xi(\xi\eta) = 3200$  քայլի:

$U(\xi\eta) = +0-20$

$\xi(\eta\xi) = 2800$  »

500 քայլի դիմաց 0-80 տակ  $= 40$

3200 » » 0-20 »  $= 64$

$U(\eta\xi) = +64 - (-40) : 2,8 = +0-37$

Կանոն.  $U(\xi\eta)$  նշանը չի փոխվում -պլյուս է, պլյուս էլ մնում է,  
բազ յեթե մինուս է, մինուս էլ մնում է:

$U(\xi\eta)$  նշանը փոխվում է, հակառակն է տեղի ունենում. մինուսը  
դառնում է պլյուս և ընդհակառակը:

$$R = \xi + S$$

$$R = 0,74 + 0 - 37 = 1 - 11$$

Հրաման տակ «հարթաչափ 1-11»

Նշանոց 29, վերջին սյու-  
նակում նեաման անկյունը  
 $= 0 - 74$

**Ա. դյուսակ**

**Աստիճաններն անկյունաչափի բաժանումների վերածելու համար**

Աստ.	0°	1°	2°	3°	4°	5°	6°	7°	8°	9°
0°	0	0-17	0-33	0-50	0-67	0-83	1-00	1-17	1-33	1-50
10°	1-67	1-83	2-00	2-17	2-33	2-50	2-67	2-83	3-00	3-17
20°	3-33	3-50	3-67	3-83	4-00	4-17	4-33	4-50	4-67	4-83
30°	5-00	5-17	5-33	5-50	5-67	5-83	6-00	6-17	6-33	6-50
40°	6-67	6-83	7-00	7-17	7-33	7-50	7-67	7-83	8-00	8-17
50°	8-33	8-50	8-67	8-83	9-00	9-17	9-33	9-50	9-67	9-83
60°	10-00	10-17	10-33	10-50	10-67	10-83	11-00	11-17	11-33	11-50
70°	11-67	11-83	12-00	12-17	12-33	12-50	12-67	12-83	13-00	13-17
80°	13-33	13-50	13-67	13-83	14-00	14-17	14-33	14-50	14-67	14-83
90°	15-00	—	—	—	—	—	—	—	—	—

Հասարակական հարկերի աղյուսակ

R=1000

Ամս. հ.ճ.մ.	R=1000											Ամս. հ.ճ.մ.
	0-00	0-10	0-20	0-30	0-40	0-50	0-60	0-70	0-80	0-90	0-00	
0	0	10	21	31	42	52	63	73	84	94	105	29
1	105	115	126	136	147	157	167	178	188	199	209	28
2	209	219	230	240	250	261	271	282	292	302	313	27
3	313	313	334	344	354	364	375	385	395	406	416	26
4	416	426	436	446	457	467	477	487	497	508	518	25
5	518	528	538	548	558	568	578	588	598	608	618	24
6	618	628	638	648	658	668	678	687	697	707	717	23
7	717	726	736	746	756	765	775	784	794	804	813	22
8	813	823	833	842	852	861	870	880	889	898	908	21
9	908	917	926	936	945	954	963	972	982	991	1000	20
10	1000	1009	1018	1027	1036	1045	1054	1062	1072	1080	1089	19
11	1089	1098	1107	1116	1124	1133	1141	1150	1159	1167	1176	18
12	1176	1184	1192	1201	1209	1217	1226	1234	1242	1250	1259	17
13	1259	1267	1275	1283	1291	1299	1307	1314	1322	1330	1338	16
14	1338	1344	1354	1361	1369	1377	1384	1392	1399	1407	1414	15

Ամս. հ.ճ.մ.	Միջին						Ամս. հ.ճ.մ.
	0-17	0-33	0-50	0-67	0-83	0-100	
0	0	0,000	0,000	0,000	0,000	0,000	45
1	0,017	0,035	0,052	0,070	0,087	0,105	44
2	0,035	0,052	0,070	0,087	0,105	0,123	43
3	0,052	0,070	0,087	0,105	0,123	0,141	42
4	0,070	0,087	0,105	0,123	0,141	0,158	41
5	0,087	0,105	0,123	0,141	0,158	0,176	40
6	0,105	0,123	0,141	0,158	0,176	0,194	39
7	0,123	0,141	0,158	0,176	0,194	0,213	38
8	0,141	0,158	0,176	0,194	0,213	0,231	37
9	0,158	0,176	0,194	0,213	0,231	0,249	36
10	0,176	0,194	0,213	0,231	0,249	0,268	35
11	0,194	0,213	0,231	0,249	0,268	0,287	34
12	0,213	0,231	0,249	0,268	0,287	0,306	33
13	0,231	0,249	0,268	0,287	0,306	0,325	32
14	0,249	0,268	0,287	0,306	0,325	0,344	31
15	0,268	0,287	0,306	0,325	0,344	0,364	30
16	0,287	0,306	0,325	0,344	0,364	0,384	29
17	0,306	0,325	0,344	0,364	0,384	0,404	28
18	0,325	0,344	0,364	0,384	0,404	0,424	27
19	0,344	0,364	0,384	0,404	0,424	0,445	26
20	0,364	0,384	0,404	0,424	0,445	0,466	25
21	0,384	0,404	0,424	0,445	0,466	0,488	24
22	0,404	0,424	0,445	0,466	0,488	0,510	23
23	0,424	0,445	0,466	0,488	0,510	0,532	22
24	0,445	0,466	0,488	0,510	0,532	0,554	21
25	0,466	0,488	0,510	0,532	0,554	0,577	20
26	0,488	0,510	0,532	0,554	0,577	0,601	19
27	0,510	0,532	0,554	0,577	0,601	0,625	18
28	0,532	0,554	0,577	0,601	0,625	0,649	17
29	0,554	0,577	0,601	0,625	0,649	0,675	16
30	0,577	0,601	0,625	0,649	0,675	0,700	15
31	0,601	0,625	0,649	0,675	0,700	0,727	14
32	0,625	0,649	0,675	0,700	0,727	0,754	13
33	0,649	0,675	0,700	0,727	0,754	0,781	12
34	0,675	0,700	0,727	0,754	0,781	0,810	11
35	0,700	0,727	0,754	0,781	0,810	0,839	10
36	0,727	0,754	0,781	0,810	0,839	0,869	9
37	0,754	0,781	0,810	0,839	0,869	0,900	8
38	0,781	0,810	0,839	0,869	0,900	0,933	7
39	0,810	0,839	0,869	0,900	0,933	0,966	6
40	0,839	0,869	0,900	0,933	0,966	1,000	5
41	0,869	0,900	0,933	0,966	1,000	1,036	4
42	0,900	0,933	0,966	1,000	1,036	1,072	3
43	0,933	0,966	1,000	1,036	1,072	1,111	2
44	0,966	1,000	1,036	1,072	1,111	1,150	1
45	1,000	1,036	1,072	1,111	1,150	1,192	0

Հասարակական հարկերի աղյուսակ

Հրամատարի հեռացման համար

Բազա	100	150	200	250	300	350	400	450	500	550	Բազա
Հնչ											Հնչ
0-50	5	8	10	13	16	18	21	24	26	29	29-50
